16/11/2007
համար 366 Ն

# «ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԴՐԱՆՑՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/04- Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ նախագահի 03.06.08թ. թիվ 172 Ն, 01.07.08թ. թիվ 187-Ն, 02.06.09թ. թիվ 159-Ն, 02.06.09թ. թիվ 162-Ն, 08.09.09թ. թիվ 265-Ն, 03.11.09թ. թիվ 318-Ն, 07.12.10թ. թիվ 327 Ն որոշումով կատարված փոփոխությունները

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի, 20-րդ հոդվածի «ե», «իա» կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: Մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունները հաշվետվությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունները, դրանց լրացման, ներկայացման կարգն ու ժամկետները հաստատելու մասին» թիվ 716 Ն որոշմամբ սահմանված ձևով, կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունները, դրանց լրացման, ներկայացման կարգն ու ժամկետները հաստատելու մասին» թիվ 716 Ն որոշումը:

**Հայաստանի Հանրապետության**
**կենտրոնական բանկի նախագահ** **Տ. Սարգսյան**

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի 16 նոյեմբերի թիվ 366 Ն որոշման

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/04

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԴՐԱՆՑՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

## ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետև` Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները:

## ԲԱԺԻՆ II. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Ապահովագրական ընկերությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում հաշվետվությունների հետևյալ ձևերը` սույն կետի աղյուսակում նշված պարբերականությամբ.

| | Հաշվետվության անվանումը | Հաշվե-տվության թիվը (ձևը) | Ներկայացման ժամանակաշրջանը |
|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* |
| 1. | Հաշվեկշիռ | 1 | ամսական, տարեկան |
| 2. | Հաշվետվություն ապահովագրության պայմանագրերի և ապահովագրավճարների վերաբերյալ | 2 | եռամսյակային |
| 3. | Հաշվետվություն Ն11, Ն12, Ն2, Ն3, Ն4, Ն5 հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ | 3 | ամսական |
| 4. | Հաշվետվություն ապահովագրական գումարների և հատուցումների վերաբերյալ | 4 | եռամսյակային |
| 5. | Հաշվետվություն եկամուտների և ծախսերի վերաբերյալ | 5 | ամսական, տարեկան |
| 6. | Հաշվետվություն ապահովագրական ընկերության | 6 | կիսամյակային |

| | | | |
|---|---|---|---|
| | ծառայություններից օգտվող իրավաբանական անձանց վերաբերյալ | | |
| 7. | Հաշվետվություն ակտիվների և պարտավորությունների մարմանը մնացած ժամկետների և պայմանագրային ժամկետների վերաբերյալ | 7 | եռամսյակային |
| 8. | Հաշվետվություն կանոնադրական կապիտալի փոփոխության վերաբերյալ | 8 | յուրաքանչյուր փոփոխության դեպքում |
| 9. | Հաշվետվություն ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ | 9 | ամսական, տարեկան |
| 10. | Հաշվետվություն վերաապահովագրության վերաբերյալ | 10 | եռամսյակային |
| 11. | Հաշվետվություն ապահովագրության պայմանագրերի մինչև գործողության ավարտը մնացած ժամկետների և պայմանագրային ժամկետների վերաբերյալ | 11 | եռամսյակային |
| 12. | Հաշվետվություն ապահովագրական հայտերի վերաբերյալ | 12 | եռամսյակային |
| 13. | Հաշվետվություն սուբրոգացիայի իրավունքի կիրառման հետևանքով առաջացած պահանջների վերաբերյալ | 13 | կիսամյակային |
| 14. | Հաշվետվություն ապահովագրական ընկերության և ոչ ռեզիդենտների միջև իրականացված գործառնությունների վերաբերյալ | 14 | եռամսյակային |
| 15. | Հաշվետվություն չվաստակած ապահովագրավճարների պահուստի, ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների պահուստի, բոնուսների և զեղչերի պահուստի, տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստի վերաբերյալ | 15 | ամսական |
| 16. | Հաշվետվություն տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստի գործակցի և հավասարակշռման պահուստի վերաբերյալ | 16 | տարեկան |
| 17. | Հաշվետվություն ապահովագրական սակագների վերաբերյալ | 17 | եռամսյակային |
| 18. | Հաշվետվություն խոշոր ապահովադիրների (ապահովագրված անձանց) վերաբերյալ | 18 | եռամսյակային |
| 19. | Հաշվետվություն տրամադրված փոխառությունների, | 19 | ամսական |

| | | | |
|---|---|---|---|
| | դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ | | |
| 20 | Հաշվետվություն արժեթղթերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների վերաբերյալ | 20 | օրական |
| 21 | Հաշվետվություն տարեկան պետական տուրքի և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին վճարված պարտադիր վճարների վերաբերյալ | 21 | տարեկան |
| ~~22~~ | ~~Հաշվետվություն արտարժութային դիրքերի վերաբերյալ~~ | ~~22~~ | ~~ամսական~~ |

22-րդ տողն ուժը կորցրել է 07.12.10թ. թիվ 327 Ն որոշմամբ

2.1. Ապահովագրական ընկերությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում նաև 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» հաստատելու մասին» թիվ 312 Ն որոշմամբ հաստատված «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 3/03-ի (այսուհետ՝ կանոնակարգ 3/03) 8-րդ, 64-րդ և 65-րդ կետերի համաձայն՝ կանոնակարգ 3/03-ով չնախատեսված մեթոդներով ձևավորած պահուստների հաշվարկները՝ տվյալ պահուստի ձևավորման պարբերականությամբ:

## ԲԱԺԻՆ III. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3. Ապահովագրական ընկերությունները սույն կանոնակարգով սահմանված հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում էլեկտրոնային տարբերակով Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով, որոնք փոփոխելն արգելվում է, բացառությամբ թիվ 10 հաշվետվության, որի համար Կենտրոնական բանկը տրամադրում է լրացման օրինակելի ձևը: Հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները ներկայացվում են Կենտրոնական բանկ Սի-Բի-Էյ-նեթ համակարգով: Այդ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կրիչներով՝ կից ներկայացնելով էլեկտրոնային փոստի խափանման վերաբերյալ գրություն: Սույն կետում նշվածից բացի այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չներկայացված:

3.1. Թիվ 10 հաշվետվությունը լրացման թերություններից զերծ պահելու նպատակով ապահովագրական ընկերությունները մինչև Կենտրոնական բանկ ուղարկելը ստուգում են (վալիդացնում են) Էքս-Էս-Դի (xsd) ֆորմատի ֆայլերով, որոնք ապահովագրական ընկերություններին է տրամադրում Կենտրոնական բանկը: Հաշվետվության ընդունման գործընթացը կարգավորելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է ապահովագրական ընկերություններին ուղարկել էքս-էմ-էլ (xml) և էքս-էս-դի (xsd) ֆորմատի ֆայլերի թարմացված տարբերակներ:

3.2. Ապահովագրական ընկերություններից ստացված բոլոր թիվ 10 հաշվետվությունները, որոնցում ստուգման արդյունքում հայտնաբերվում են տեխնիկական սխալներ, համարվում են չընդունված:

4. Հաշվետվությունների անվանումները պետք է կոդավորվեն:

5. Հաշվետվության (բացառությամբ՝ թիվ 10 հաշվետվության) անվանման կոդն ունի հետևյալ կառուցվածքը.

| Ապահովագրական ընկերության կոդը | գծիկ | հաշվետվության համարը | կետ | հապավումը |
|---|---|---|---|---|

| XXXXX | - | XX | . | Xls |
|---|---|---|---|---|

Թիվ 10 հաշվետվության անվանման կոդը համապատասխանում է մյուս բոլոր հաշվետվությունների կոդերին, բացառությամբ հապավման, որը թիվ 10 հաշվետվության համար՝ xml է: Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է: Կենտրոնական բանկ ներկայացվող ֆայլերը, բացի հաշվետվության ձևերին համապատասխան ներկայացված տեղեկատվությունից, այլ տեղեկատվություն չպետք է պարունակեն:

6. Հաշվետվություններում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվերը (օրինակ՝ ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններում բացառությամբ՝ թիվ 21 հաշվետվության՝ ամսվա վերջին օրվա ամսաթիվը): Ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի (օրինակ՝ 31/01/2003): Ընդ որում, հաշվետվությունները կազմելիս մեկ տարին պետք է հասկանալ 365 կամ 366 օր, այսինքն՝ օրացուցային օրերի քանակը (եթե կոնկրետ հաշվետվության մեկնաբանությունները հստակ չեն սահմանում տվյալ հաշվետվության իմաստով մեկ տարվա օրերի քանակը):

7. Հաշվետվությունները պետք է պարունակեն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա (եթե ընկերությունն աշխատել է շաբաթ, կիրակի կամ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրը, ապա՝ այդ օրվա) դրությամբ տվյալները: Ընկերության կողմից ինքնուրույն բացված հաշվային պլանի հաշիվները Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններում չեն արտացոլվում որպես առանձին հաշիվ:

8. 2008 թվականի հունիսի 30-ից (ներառյալ) Կենտրոնական բանկ ամսական, եռամսյակային և կիսամյակային հաշվետվությունների ներկայացման ժամկետը մասնաճյուղեր չունեցող և մինչև 15 (ներառյալ) մասնաճյուղ ունեցող ապահովագրական ընկերությունների համար սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը (ներառյալ), իսկ 16 և ավելի մասնաճյուղ ունեցող ապահովագրական ընկերությունների համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը (ներառյալ):

9. Կենտրոնական բանկ տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը, բացառությամբ թիվ 21 հաշվետվության, որը Կենտրոնական բանկ է ներկայացվում մինչև ապահովագրության յուրաքանչյուր դասի համար հերթական տարեկան պետական տուրքի

10. Թիվ 8 հաշվետվությունը ներկայացվում է մինչև յուրաքանչյուր փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 6-րդ աշխատանքային օրը:

10.1. Սույն կանոնակարգի հավելված 20-ի թիվ 20 հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու օրվա ժամը 17.00: Սույն կետում նշված ժամկետում հաշվետվություն չներկայացնելը հանդիսանում է հայտարարություն առ այն, որ տվյալ հաշվետու ժամանակահատվածում ապահովագրական ընկերությունը սույն կանոնակարգի 213-րդ կետի համաձայն թիվ 20 հաշվետվությունում արտացոլվող գործառնություններ չի իրականացրել, կամ դրանց ծավալը չի գերազանցել սույն կանոնակարգի 214-րդ կետով սահմանված չափը:

11. Հաշվետվությունները լրացվում են հազար դրամներով:

12. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ սույն կանոնակարգի 3-րդ կետի համաձայն, զուգահեռաբար հաշվետվությունների փոփոխման (ճշգրտման) վերաբերյալ գրավոր տեղեկացնելով Կենտրոնական բանկի նախագահին: Ճշգրտված հաշվետվության էլեկտրոնային տարբերակի և գրավոր տեղեկանքի առկայության դեպքում միայն փոփոխված հաշվետվությունները կհամարվեն Կենտրոնական բանկ ներկայացված:

13. Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե այդ հաշվետվության էլեկտրոնային տարբերակը հնարավոր է ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, և այն զերծ է ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունից: Սույն կետի պահանջը չի տարածվում ապահովագրական ընկերությունների վրա, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ֆայլերում:

14. Եթե ներկայացվող տվյալները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել, կամ եթե հաշվետվությանն առնչվող գործարքներ չեն իրականացվել, ապա ապահովագրական ընկերությունը դրանց փոխարեն ներկայացնում է գրություն, որտեղ նշվում են չներկայացվող հաշվետվությունների անվանումները:

15. Կենտրոնական բանկի ապահովագրական ընկերությունների վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման՝ տվյալ ընկերության համապատասխան վերահսկողը հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական և վերահսկողական նպատակներից ելնելով, ծանուցման միջոցով ապահովագրական ընկերություններից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

16. Ապահովագրական ընկերությունները պարտավոր են ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ողջամիտ ժամկետ նշված չէ), ներկայացնել ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկությունները:

17. Հաշվի առնելով ապահովագրական ընկերության գտնվելու վայրը՝ ընկերությանը ծանուցում կարող է տրվել հեռախոսի (հեռախոսագրի), էլեկտրոնային փոստի, Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի կամ կապի՝ սահմանված այլ պահուստային միջոցներով:

18. Ընկերության լիազոր ներկայացուցիչը կարող է հրավիրվել Կենտրոնական բանկի ապահովագրական ընկերությունների վերահսկողության համար պատասխանատու

19. Ծանուցման փաստաթուղթը ստորագրվում է Կենտրոնական բանկի ապահովագրական ընկերությունների վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի կողմից:

## ԲԱԺԻՆ IV. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

20. Հաշվետվությունները լրացնելիս հաշվետու ապահովագրական ընկերությունների, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ապահովադիրների (ապահովագրված անձանց) անվանումները (անունները), վերջիններիս վերաբերող այլ տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանց չակերտների, միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմս Արմենիան)՝ չօգտագործելով Յունիկոդ տառատեսակի նիշեր և Alt+Enter ստեղների համադրություն պարունակող տեքստեր:

21. Սույն կանոնակարգով սահմանված հաշվետվություններում ոչ կյանքի և կյանքի ապահովագրության դասերի տարանջատումը կատարվում է համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի:

22. Եթե ապահովագրության պայմանագրով նախատեսված են այնպիսի ռիսկեր, որոնք տարբեր ապահովագրության դասերի գծով են (օրինակ՝ ավտոտրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության պայմանագրի դեպքում), ապա սույն կանոնակարգով սահմանված հաշվետվություններում յուրաքանչյուր դասի գծով ցուցանիշները պետք է արտացոլել առանձին: Մասնավորապես՝ եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքվել է ապահովագրության պայմանագիր, որը ներառում է ռիսկեր տարբեր ապահովագրության դասերի գծով, ապա տվյալ պայմանագիրն արտացոլվում է յուրաքանչյուր դասի գծով՝ որպես մեկ առանձին պայմանագիր: Ելնելով նշվածից՝ առանձին են արտացոլվում նաև մնացած ցուցանիշները, այդ թվում՝ ապահովագրավճարները, ապահովագրական հատուցումները, ապահովագրական գումարները, ապահովագրական սակագները: Այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունը չունի հաշվետվություններում նշվող ցուցանիշների ըստ դասերի տարանջատման հստակ մեթոդաբանություն, ապա հաշվետվություններում ցուցանիշներն արտացոլելիս պետք է հիմնվի հետևյալ սկզբունքի վրա: Մասնավորապես, միասնական ապահովագրավճարները ենթակա են տարանջատման՝ ըստ առանձին ապահովագրության դասերի՝ հաշվի առնելով առանձին դասերի (ենթադասերի) համար ապահովագրական ընկերության կողմից սահմանված սակագներով հաշվարկված ապահովագրավճարները: Այսինքն՝ այն դեպքում, երբ յուրաքանչյուր առանձին դասի (ենթադասի) գծով սահմանված ապահովագրական սակագներով հաշվարկված ապահովագրավճարների (հաշվարկային ապահովագրավճարներ) հանրագումարը տարբերվում է ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրավճարից (պայմանագրի ներքո բոլոր ռիսկերի գծով ստացվող միասնական ապահովագրավճարից), ապա միասնական ապահովագրավճարը, ըստ դասերի տարանջատելիս, պետք է հաշվի առնել հաշվարկային ապահովագրավճարների հանրագումարում յուրաքանչյուր հաշվարկային ապահովագրավճարի

Տվյալ պարագայում միասնական ապահովագրավճարը յուրաքանչյուր ռիսկի գծով պետք է տարանջատվի հետևյալ կերպ`

- ավտոտրանսպորտային միջոցների ֆիզիկական վնասից և գողության ռիսկից ապահովագրության գծով ապահովագրավճար` 128 * 90/135 = 85,3 հազար դրամ,

- երրորդ կողմի հանդեպ ավտոտերերի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության ապահովագրավճար` 128 * 35/135 = 33,2 հազար դրամ,

- դժբախտ պատահարներից վարորդի և ուղևորների ապահովագրության գծով ապահովագրավճար` 128 * 10/135 = 9,5 հազար դրամ:

Միասնական ապահովագրական սակագները տարանջատելիս պետք է յուրաքանչյուր դասի համար տարանջատված ապահովագրավճարը հարաբերել յուրաքանչյուր դասի գծով ապահովագրական գումարին:

23. Եթե ապահովագրական ընկերությունը չունի հաշվետվություններում նշվող ցուցանիշների ըստ դասերի տարանջատման հստակ մեթոդաբանություն կամ սույն կանոնակարգի 22-րդ կետում նշված սկզբունքը կիրառելի չէ տվյալ ապահովագրության պայմանագրի համար, ապա սույն կանոնակարգով սահմանված հաշվետվություններում այդ պայմանագրի գծով ցուցանիշները լրացվում են ապահովագրության այն դասի ներքո, որին պատկանում է հիմնական ապահովագրական ռիսկը:

24. Սույն կանոնակարգի իմաստով «ապահովագրության պայմանագիր» ասելով պետք է հասկանալ նաև ապահովագրության պայամանագրին կից հավելվածը (հավելվածները):

25. Սույն կանոնակարգի իմաստով` այն դեպքում, երբ առկա է միայն ապահովագրության վկայագիրը «ապահովագրության պայմանագրի» փոխարեն հասկացվում է «ապահովագրության վկայագիրը»:

26. Սույն կանոնակարգի իմաստով` հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված, երբ այն մտնում է ուժի մեջ, այսինքն` երբ ապահովագրողն ստանձնում է ապահովագրության պայմանագրով նախատեսված ռիսկը:

27. Սույն կանոնակարգով սահմանված հաշվետվությունների լրացման տեսանկյունից համաապահովագրության պայմանագրերը պետք է դիտել որպես ապահովագրության պայմանագրեր և հաշվետվությունները լրացնել նույն կերպ, ինչ ապահովագրության պայմանագրերի դեպքում՝ ելնելով համաապահովագրություն իրականացրած ընկերության՝ տվյալ ռիսկում ունեցած մասնակցության չափից:

28. Սույն կանոնակարգի հաշվետվությունների այն վանդակները (բջիջները), որոնցում նշվող ցուցանիշները չեն վերաբերում տվյալ ապահովագրական ընկերությանը, չեն լրացվում:

29. Անհատ ձեռնարկատերերին, պետական մարմիններին և նմանատիպ այլ սուբյեկտներին վերաբերող տեղեկատվությունը ցույց է տրվում իրավաբանական անձանց վերաբերող տեղեկատվության կազմում:

30. Սույն կանոնակարգի իմաստով «վճարվող», «փոխանցվող», «ստացվող» բառերի տակ պետք է հասկանալ ինչպես փաստացի վճարված, փոխանցված և ստացված գումարները, այնպես էլ վճարման, փոխանցման և ստացման ենթակա գումարները:

31. Սույն կանոնակարգի իմաստով «հաշվեգրած ապահովագրավճար» ասելով պետք է հասկանալ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի այն մեծությունը, որն ապահովադրի կողմից ամբողջությամբ վճարվել է կամ ենթակա է վճարման ապահովագրական ընկերությանը:

32. Սույն կանոնակարգի իմաստով «հաշվեգրած ապահովագրական հատուցում» ասելով պետք է հասկանալ ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցումներ իրականացնելու նպատակով կրեդիտորական պարտքերի ձևավորմանն ուղղված միջոցները, որոնք կատարվել են ծախսերի հաշվին:

## ԲԱԺԻՆ V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

### ԳԼՈՒԽ 1. ՀԱՇՎԵԿՇԻՌ՝ ԹԻՎ 1 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Թիվ 1 հաշվետվությունը լրացվում է Կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 02-ի թիվ 314 Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի ---ի թիվ -- Ն հրամանով համատեղ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգին» համապատասխան:

34. Թիվ 1 հաշվետվության 8-րդ սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ հաշվարկված հաշվետու օրվա համար Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

### ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 2 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

35. Թիվ 2 հաշվետվությունը բաղկացած է 3 աղյուսակից:

36. 1-ին աղյուսակում արտացոլվում է ապահովագրության պայմանագրերի քանակի և դրանցով ապահովագրված ապահովագրության օբյեկտների քանակի վերաբերյալ տեղեկատվություն:

37. 1-ին աղյուսակի 6-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված ապահովագրության վկայագրերի քանակները, իսկ 7-րդ սյունակում` այդ վկայագրերի համարները` անջատելով ստորակետներով:

38. 2-րդ աղյուսակում արտացոլվում է ֆիզիկական անձանց հետ, իսկ 3-րդ աղյուսակում` իրավաբանական անձանց հետ կնքված ապահովագրության պայմանագրերի գծով տեղեկատվություն:

39. Հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 2-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված համախառն ապահովագրավճարների մեծությունները: Եթե նշված ավտոապահովագրովճարների մասով կիրառվում են զեղչեր, ապա հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 3-րդ սյունակներում լրացվում են զեղչի գումարները (բացարձակ մեծությամբ), իսկ հավելավճար կիրառվելու դեպքում հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 4-րդ սյունակներում լրացվում են հավելավճարի գումարները (բացարձակ մեծությամբ):

40. Հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 5-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գործակալների (բացառությամբ` ապահովագրական ընկերության գործակալ հանդիսացող ապահովագրական գործակալների հաստատուն աշխատավարձի մեծության) գծով հաշվեգրված միջնորդավճարների մեծությունները (վերաապահովագրության հետ չառնչվող գումարները):

41. Հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 7-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված վերաապահովագրավճարների մեծությունները` ներառյալ ապահովագրական բրոքերներին վերաապահովագրության համար տրվող միջնորդավճարների (երկրորդային միջնորդավճարներ), ապահովագրական ընկերության, որպես հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտի շահութահարկի, ինչպես նաև վերաապահովագրողներից ստացվող միջնորդավճարների մեծությունները:

42. Հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 8-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրական բրոքերների գծով հաշվեգրված միջնորդավճարենի միջնորդավճարների մեծությունները:

43. Հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 9-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վերաապահովագրողից ստացվելիք միջնորդավճարների գծով հաշվեգրված մեծությունները:

44. Հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 10-րդ սյունակում լրացվում են ապահովագրության պայմանագրերի վերաապահովագրությունը ոչ ռեզիդենտ վերաապահովագրողների մոտ իրականացնելու համար նախատեսված ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված մեծությունները:

45. Հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 13-րդ սյունակում ցույց են տրվում ընթացքում դադարեցված ապահովագրության պայմանագրերի գծով հետ վերադարձվող ապահովագրավճարների` հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված մեծությունները:

46. Հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 14-րդ սյունակում արտացոլվում են դադարեցված ապահովագրության պայմանագրերի գծով վերադարձվող ապահովագրավճարներում վերաապահովագրողների մասնակցության չափի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված մեծությունները:

47. Հաշվետվության 2-րդ և 3-րդ աղյուսակների 15-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի գծով հաշվեգրված համախառն ապահովագրավճարները՝ նվազեցված զեղչերի և առաջնային միջնորդավճարների գումարի չափով և ավելացված հավելավճարների մեծության չափով:

## «ԳԼՈՒԽ 3. Ն11, Ն12, Ն2, Ն3, Ն4, Ն5 ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 3 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

48. Թիվ 3 հաշվետվությունը բաղկացած է 19 աղյուսակից:

49. 1-ին և 2-րդ աղյուսակներում ներկայացվում են հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկներին մասնակցող ցուցանիշներն ու նորմատիվների փաստացի մեծությունները՝ հաշվարկված համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ի (այսուհետ՝ կանոնակարգ 3/02):

49.1 Հաշվետվության 1-ին աղյուսակի 2-րդ սյունակում լրացվում է հաշվետու ամսվա վերջին և առաջին օրերի դրությամբ պահանջների պահուստի մեծությունների (նվազեցրած պահանջների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով) հարաբերությունը: 3-րդ սյունակում լրացվում է կանոնակարգ 3/02-ի հավելված 1-ի համաձայն հաշվարկվող վճարունակության պահանջվող մեծությունը (այսուհետ՝ ՎՊՄ): Եթե ապահովագրական ընկերությունը չի խախտել ստանձնած ապահովագրական ռիսկերի գծով առավելագույն չափի Ն3 նորմատիվը, ապա 9-րդ սյունակում լրացվում է ստանձնած պարտավորության մեծության (զուտ ապահովագրական գումարի) ամենամեծ գումարը: Եթե ապահովագրական ընկերությունը խախտել է Ն3 նորմատիվը, ապա 9-րդ սյունակում ցույց են տրվում խախտում առաջացնող գումարները՝ ըստ նվազող հաջորդականության:

49.2 Եթե ապահովագրական ընկերությունը չի խախտել մեկ փոխառուի գծով ստանձնած ռիսկի առավելագույն չափի Ն5 նորմատիվը, ապա աղյուսակ 1-ի 10-րդ սյունակում լրացվում է մեկ փոխառուի գծով ստանձնած ռիսկի ամենամեծ գումարը: Եթե ապահովագրական ընկերությունը խախտել է Ն5 նորմատիվը, ապա 10-րդ սյունակում ցույց են տրվում խախտում առաջացնող գումարները՝ ըստ նվազող հաջորդականության:

50. Հաշվետվության 3-րդ աղյուսակի 1-ին սյունակում լրացվում է հիմնական կապիտալի հետևյալ տարրերի հանրագումարը՝ վճարված կանոնադրական կապիտալ (ներառյալ՝ բաժնետոմսերի հավելավճար), գլխավոր պահուստ, չբաշխված շահույթ (եկամուտների պահուստ): 2-րդ սյունակում լրացվում են կանոնակարգ 3/02-ի 19-րդ կետով սահմանված լրացուցիչ կապիտալի տարրերի մեծությունները: 4-րդ սյունակում լրացվում է հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերի հանրագումարը՝ համաձայն կանոնակարգ 3/02-ի 17-րդ կետի: 5-րդ սյունակում լրացվում է լրացուցիչ կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերի հանրագումարը՝ համաձայն կանոնակարգ 3/02-ի 20-րդ կետի: Այն օրերին, երբ ապահովագրական ընկերության հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), լրացվում են նախորդ օրվա տվյալները:

52. Հաշվետվության 4-8-րդ աղյուսակներում ներկայացվում են Ն12 նորմատիվի ՎՊՄ տարրի հաշվարկում ներառվող գումարները: Ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունը, ինչպես նաև կանոնակարգ 3/02-ի 16-րդ կետով նշված ընկերությունը, երեք տարուց ավելի գործունեություն ծավալած լինելու դեպքում լրացնում է ապահովագրավճարների և հատուցումների մեթոդով

53. Հաշվետվության 5-րդ աղյուսակի 1-ին, 2-րդ, 3-րդ սյունակներում լրացվում են կանոնակարգ 3/02-ի հավելված 1-ի 6-րդ կետով սահմանված «Պ» տարրի հաշվարկման համար անհրաժեշտ մեծությունները, իսկ 4-րդ և 5-րդ սյունակներում լրացվում են նույն կետի համաձայն հաշվարկվող համապատասխան սեփական պահման գործակցի բաղկացուցիչ տարրերը և 6-րդ սյունակում՝ սեփական պահման գործակցի մեծությունը: Աղուսակ 5-ը լրացնելիս հաշվի է առնվում կանոնակարգ 3/02-ի հավելված 1-ի 7-րդ և 8-րդ կետով նախատեսված պահանջները:

54. Ապահովագրական ընկերությունները, որոնք իրականացնում են գործունեություն կանոնակարգ 3/02-ի Հավելված 1-ի 11-րդ կետում նշված դասերով, տվյալ դասերի համար լրացնում են հաշվետվության 6-րդ և 7-րդ աղյուսակները, 18-րդ կետում նշված դասերի գծով միայն 6-րդ աղյուսակը, 17-րդ կետում նշված դասերի համար միայն 8-րդ աղյուսակի 1-3-րդ սյուները, իսկ 19-րդ կետում նշված դասերի համար միայն 8-րդ աղյուսակի 4-րդ սյունը: Աղյուսակներում արտացոլվում են կանոնակարգ 3/02-ի հավելված 1-ի գլուխ 2-ի համաձայն հաշվարկվող մեծությունները:

55. Հաշվետվության 9-րդ աղյուսակում ներկայացվում են Ն12 նորմատիվի տարր հանդիսացող վարկային ռիսկի հաշվարկում մասնակցող ակտիվներն՝ ըստ ռիսկի կշիռների, և դրանց գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստների մեծությունները: Ընդ որում, 9-րդ աղյուսակում չեն ներկայացվում այն ակտիվները, որոնց վրա տարածվում է վարկային ռիսկի զսպման մեխանիզմը (այսուհետ՝ ՎՌԶՄ): 9-րդ աղյուսակի 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 23-րդ և 25-րդ սյունակներում լրացվում են կանոնակարգ 3/02-ի հավելված 2-ի համաձայն՝ ըստ ռիսկի կշիռների խմբավորված ակտիվների հանրագումարները, իսկ 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ, 20-րդ, 22-րդ, 24-րդ և 26-րդ սյունակներում՝ համապատասխան ռիսկի կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստների մեծությունները: 27-րդ սյունակում ամփոփվում է այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց վրա չի տարածվում ՎՌԶՄ-ն:

55.1 Հաշվետվության 10-րդ աղյուսակում ներկայացվում են միայն այն ակտիվները, որոնց վրա, համաձայն կանոնակարգ 3/02-ի, տարածվում են ՎՌԶՄ-ները: Աղյուսակի 1-ին սյունակում լրացվում է ՎՌԶՄ-ին ենթակա ակտիվների ընդհանուր գումարը, 2-րդ սյունակում՝ վերոհիշյալ ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը: 3-րդ սյունակում լրացվում է ՎՌԶՄ-ին ենթակա ակտիվների այն մասը, որոնց ռիսկի կշիռը ՎՌԶՄ կիրառման արդյունքում փոխվել է: 4-րդ սյունակում լրացվում է ՎՌԶՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը: 5-ից 17-րդ սյունակներում լրացվում են ակտիվների մեծություններն ըստ ռիսկի կշիռների՝ համապատասխան հնարավոր կորուստների պահուստի չափով նվազեցնելուց հետո: Ընդ որում, ակտիվի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության (կամ ապահովվածություն տրամադրող անձի) ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի/գործիքի ռիսկի կշռին համապատասխան սյունակում: Եթե ակտիվի մեծությունը 100 դրամ է, պահուստը՝ 10 դրամ, փոխառուի ռիսկի կշիռը՝ 100 տոկոս, ակտիվի գծով առկա է գրավ, որի արժեքը 60 դրամ է, գրավի ռիսկի կշիռը 50 տոկոս է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքն արտացոլվում է առաջին սյունակում 100 դրամի չափով, 10 դրամ պահուստը՝ 2-րդ սյունակում: 3-րդ սյունակում կլրացվի 60 դրամ, իսկ 4-րդ սյունակում՝ 60*(100%-50%)=30 դրամ (որտեղ 60-ը այն մեծությունն է, որի ռիսկի կշիռը փոխվում է ՎՌԶՄ կիրառելիս, 100 տոկոսը ակտիվի ռիսկի կշիռն է մինչև ՎՌԶՄ կիրառելը, իսկ 50 տոկոսը՝ ակտիվի՝ ՎՌԶՄ կիրառման արդյունքում ստացվող նոր ռիսկի կշիռը): Միևնույն ժամանակ, ակտիվի

55.2 Հաշվետվության 11-րդ աղյուսակում ներկայացվում են կանոնակարգ 3/02-ի համաձայն վարկային ռիսկի հաշվարկում ներառվող այն հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների (հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով) վարկային ռիսկի հաշվարկներն ըստ օրերի, որոնց վրա չեն տարածվում ՎՌԶՄ-ները: 1-ից 12-րդ սյունակներում արտացոլվում է հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների վերածումը վարկային ռիսկի՝ ըստ փոխարկման գործոնների: 13-ից 25-րդ սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորած ըստ ռիսկի կշիռների:

55.3 Հաշվետվության 12-րդ աղյուսակում ներկայացվում են կանոնակարգ 3/02-ի համաձայն վարկային ռիսկի հաշվարկում ներառվող այն հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների (հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով) վարկային ռիսկի հաշվարկներն ըստ օրերի, որոնց վրա տարածվում են ՎՌԶՄ-ները: 1-ից 12-րդ սյունակներում արտացոլվում են հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների վերածումը վարկային ռիսկի՝ ըստ փոխարկման գործոնների: 13-րդ սյունակում լրացվում է ՎՌԶՄ ենթակա ակտիվների այն մասը, որոնց ռիսկի կշիռը ՎՌԶՄ կիրառման արդյունքում փոխվել է: 14-րդ սյունակում լրացվում է ՎՌԶՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը: 15-ից 27-րդ սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորած ըստ ռիսկի կշիռների: ՎՌԶՄ կիրառման դեպքում հետհաշվեկշռային հոդվածի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահոված մասը՝ փոխառուի ռիսկի կշռին համապատասխան սյունակում: Եթե մինչև 1 ամիս պայմանագրային ժամկետ ունեցող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունը 1000 ՀՀ դրամ է, պահուստը՝ 20 դրամ, ապա փոխարկման գործոնները կիրառելու արդյունքում հաշվեկշռային վարկային ռիսկը կկազմի (1000-20)*100%=980: Փոխառուի ռիսկի կշիռը կկազմի 100 տոկոս: Պարտավորության համար առկա է երաշխիք՝ 600 դրամի չափով: Երաշխիք տրամադրողի ռիսկի կշիռը 50% է: Այս դեպքում հետհաշվեկշռային պայմանական պարտավորության գումարը՝ 1000 դրամը, պետք է արտացոլել 7-րդ սյունակում, 20 դրամ պահուստը՝ 8-րդ սյունակում: Պարտավորության ապահովված մասը՝ 600 դրամը, պետք է լրացնել 19-րդ սյունակում, չապահովված մասը՝ (980-600) = 380 դրամը, պետք է արտացոլել 21-րդ սյունակում:

55.4 Հաշվետվության 13-րդ աղյուսակում ներկայացվում են գործառնական ռիսկի հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը՝ համաձայն կանոնակարգ 3/02-ի հավելված 3-ի: Աղյուսակի 1-ին, 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են կանոնակարգ 3/02-ով սահմանված ապահովագրական ընկերության շահույթը՝ ըստ տարիների: Ընդ որում, նշված սյունակներում համապատասխան մեծությունները լրացվում են միայն այն դեպքերում, երբ համապատասխան տարվա շահույթը մեծ կամ հավասար է 0-ի:

55.5 Հաշվետվության 14-րդ աղյուսակում ներկայացվում են արտարժութային ռիսկի հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը՝ համաձայն Կանոնակարգ 3/02-ի Հավելված 4-ի: Աղյուսակի 1-ին սյունակում լրացվում է արտարժութային երկար դիրքերի հանրագումարը, 2-րդ սյունակում՝ կարճ դիրքերի հանրագումարը (բացարձակ մեծությամբ): 3-րդ սյունակում՝ կանոնակարգ 3/02-ի Հավելված 4-ի համաձայն հաշվարկվող արտարժութային առավելագույն դիրքը: «Արտարժութային ռիսկ» տողում լրացվում է արտարժութային առավելագույն դիրքերից առավելագույնի մեծությունը:

55.6 Հաշվետվության 14.1-րդ աղյուսակի տող 1-ում լրացվում է ապահովագրական ընկերության արտարժութային ակտիվների հանրագումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Աղյուսակի 1.1-1.7 տողերում համապատասխանաբար լրացվում են ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարները, համաապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարները, ապահովագրական հատուցումների գծով համաապահովագրողների, վերաապահովագրողների և այլ անձանց նկատմամբ պահանջների գումարները և ապահովագրության պայմանագրերից ստացվելիք այլ գումարները հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Աղյուսակի տող 2-ում

լրացվում է ապահովագրական ընկերության արտարժութային պարտավորությունների հանրագումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Աղյուսակի 2.1-2.6 տողերում համապատասխանաբար լրացվում են ուղղակի ապահովագրության, համաապահովագրության պայմանագրերի, վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով վճարվելիք գումարները, ապահովագրության գծով համաապահովագրողներին և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարները և ապահովագրության գծով ստացված կանխավճարները հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Աղյուսակի 3-րդ տողում լրացվում է ապահովագրական ընկերության արտարժութային հետհաշվեկշռային հաշիվների հանրագումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Աղյուսակի 3.1-3.3 տողերում համապատասխանաբար լրացվում են ապահովագրական ընկերության՝ արտարժութային ռիսկ պարունակող ապահովագրական գումարների, ածանցյալ գործիքների գծով պայմանական ակտիվների և պարտավորությունների մեծությունները՝ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների:

56. Հաշվետվության 15-րդ աղյուսակում ներկայացվում է ապահովագրական ընկերության իրացվելիության Ն2 նորմատիվի հաշվարկման համար անհրաժեշտ մեծությունների հաշվարկը: 15-րդ աղյուսակի 2-րդ սյունակում լրացվում են հաշվետու ամսվա վերջին շաբաթվա, հաշվետու ամսվա վերջին շաբաթվան նախորդող 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ շաբաթների յուրաքանչյուր օրվա դրությամբ բարձր իրացվելի ակտիվների գումարները, որոնց հիման վրա հաշվարկվում են դրանց միջին մեծությունները, ընդ որում՝ օրերը լրացվում են նվազող հերթականությամբ. վերևի տողում լրացվում է հաշվետու ամսվա վերջին շաբաթվա վերջին նորմատիվի հաշվարկման օրվա տվյալները, հաջորդ տողում՝ նորմատիվի հաշվարկման օրվան նախորդող օրվա տվյալները, և այդպես շարունակ: «Հաշվետու ամսվա վերջին շաբաթ»-ը այն շաբաթն է, որում գտնվում է հաշվետու ամսվա վերջին օրը: Տվյալ հաշվետու ամսվա մեջ ներառված շաբաթը չի ներառվում տվյալ ամսվան հաջորդող հաշվետու ամսվա մեջ: Օրինակ՝ 2011 թվականի փետրվար ամսվա համար վերջին շաբաթը փետրվարի 27-ից մարտի 5-ն է, որը ներառվում է փետրվար ամսվա հաշվարկի մեջ և չի ներառվում մարտ ամսվա հաշվարկի մեջ: 4-րդ սյունակում լրացվում են հաշվետու ամսվա վերջին շաբաթվան հաջորդող 1-ին շաբաթվա, հաշվետու ամսվա վերջին շաբաթվա, հաշվետու ամսվա վերջին շաբաթվան նախորդող 1-ին, 2-րդ, 3-րդ շաբաթների յուրաքանչյուր օրը մարման ենթակա ապահովագրական հատուցման հետ չառնչվող բոլոր կրեդիտորական պարտավորությունների գումարները, ընդ որում, օրերը կրկին լրացվում են նվազող հերթականությամբ. վերևի տողում լրացվում է հաշվետու ամսվա վերջին շաբաթվան հաջորդող շաբաթվա վերջին օրվա տվյալները, հաջորդ տողում՝ հաշվետու ամսվա վերջին շաբաթվան հաջորդող շաբաթվա նախավերջին օրվա տվյալները, և այդպես շարունակ: 15-րդ աղյուսակի 4-րդ սյան «Ընդամենը» տողը ցույց է տալիս ապահովագրական հատուցման հետ չառնչվող բոլոր պարտավորությունների հանրագումարը, որոնց մարումը կատարվելու է Ն2 նորմատիվի հաշվարկման օրվան հաջորդող յոթ օրերի ընթացքում: 5-րդ սյունակում լրացվում են միայն «Ընդամենը» տողերը, որտեղ նշվում են նորմատիվի հաշվարկման օրվա (հաշվետու շաբաթվա վերջին օր) վերջի դրությամբ ապահովագրական հատուցումների գծով ձևավորված կրեդիտորական պարտավորությունների հանրագումարները, իսկ 6-րդ սյունակում՝ նորմատիվի հաշվարկման օրվա (հաշվետու շաբաթվա վերջին օր) վերջի դրությամբ ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների պահուստի մեծությունը:

57. Հաշվետվության 16-րդ աղյուսակը լրացվում է մեկ ապահովագրության օբյեկտը և դրանց հետ փոխկապակցված օբյեկտները ծածկող ապահովագրության պայմանագրի (պայմանագրերի) գծով ապահովագրական ընկերության կողմից ստանձնած այն պարտավորությունների (ապահովագրական գումարների) գծով՝ նվազեցված այդ պայմանագրի (պայմանագրերի) գծով վերաապահովագրողի մասնաբաժնի մասով՝ կանոնակարգ 3/02-ի 27-րդ կետում սահմանված չափով, որոնց մեծությունը կազմում է հաշվետու օրվա դրությամբ կանոնակարգ 3/02-ի համաձայն հաշվարկված ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի միջին օրական մեծության 5 և ավելի տոկոսը:

58. Հաշվետվության 16-րդ աղյուսակում ներկայացվում են ստանձնած ապահովագրական մեկ ռիսկի առավելագույն չափի Ն3 նորմատիվի հաշվարկում ընդգրկվող մեծությունները: 1-ին սյունակում լրացվում է ապահովագրության օբյեկտի կամ ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտի համարը, ընդ որում՝ ապահովագրական օբյեկտները համարակալվում են՝ առաջին ապահովագրական օբյեկտը՝ «1», երկրորդը՝ «2», և այլն, իսկ տվյալ՝ «X» համարի ապահովագրական օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտները՝ « X/1», « X/2», և այլն: 2-րդ սյունակում լրացվում է տվյալ ապահովագրական օբյեկտի անվանումը, 3-րդ սյունակում՝ տվյալ

| Ապահովագրության օբյեկտի կամ ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակց ված օբյեկտի համարը | Ապահովագրության օբյեկտի անվանում | Ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակց ված օբյեկտի անվանում | Ապահովագրության օբյեկտի գծով կնքված պայմանագրերի քանակ (հատ) | Ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտների գծով կնքված պայմանագրերի քանակ (հատ) | Ապահովագրության օբյեկտը ծածկող ապահովագրական գումարի մեծություն | Ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակց ված օբյեկտը ծածկող ապահովագրական գումարի մեծություն | Վերաապահովագրողի մասնաբաժինն ապահովագրության օբյեկտը ծածկող ապահովագրական գումարի մեծության մեջ (հազար դրամ) | Վերաապահովագրողի մասնաբաժինն ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտները ծածկող ապահովագրական գումարի մեծության մեջ (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* |
| 1 | «Ա» | - | 3 | - | 850 | - | - | - |
| 1 | - | - | - | - | 200 | - | - | - |
| 1 | - | - | - | - | 300 | - | - | - |
| 1 | - | - | - | - | 350 | - | - | - |
| 1/1 | - | «բ» | - | 2 | - | 300 | - | - |
| 1/1 | - | - | - | - | - | 200 | - | - |
| 1/1 | - | - | - | - | - | 100 | - | - |
| 1/2 | - | «գ» | - | 1 | - | 50 | - | - |

59. Հաշվետվության 17-րդ աղյուսակի 1-3-րդ սյունակներում լրացվում են կանոնակարգ 3/02-ի 30-րդ կետի աղյուսակի 1-ին կետում սահմանված ակտիվները, 4-7-րդ սյունակներում լրացվում են նշված աղյուսակի 2-րդ կետում նշված ակտիվները, 8-18-րդ սյունակներում՝ 3-րդ կետում նշված ակտիվները, 19-20-րդ սյունակներում՝ 4-րդ կետում նշված ակտիվները, 21-25-րդ սյունակներում՝ 5-րդ կետում նշված ակտիվները, 26-րդ սյունակում լրացվում են տեխնիկական պահուստների մեծությունների հանրագումարը՝ նվազեցրած վերաապահովագրողների մասնաբաժնի չափով: Այն օրերին, երբ ապահովագրական ընկերության հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), լրացվում են նախորդ օրվա տվյալները:

60. Հաշվետվության 18-րդ աղյուսակում արտացոլվում են մեկ փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ապահովագրական ընկերության այն պահանջները, որոնք գերազանցում են կանոնակարգ 3/02-ի համաձայն հաշվարկված ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի միջին օրական մեծության 5 և ավելի տոկոսը (այսուհետ՝ խոշոր փոխառուներ): «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում լրացվում է խոշոր փոխառուի անվանումը: 2-6-րդ սյունակներում լրացվում են 1-ին սյունակում նշված փոխառուին տրամադրված՝ կանոնակարգ 3/02-ի 35-րդ կետով սահմանված «Ռ» տարրի բաղադրիչների մեծությունները՝ ըստ համապատասխան սյուների: 9-րդ սյունակում լրացվում է 8-րդ սյունակում արտացոլված մեծությունների մասով հնարավոր կորուստների պահուստների հանրագումարը:

61. Աղյուսակ 19-ում արտացոլվում են խոշոր փոխառուների հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ապահովագրական ընկերության պահանջները: Աղյուսակ 19-ի 2-րդ սյունակում առանձին տողերով պետք է արտացոլվեն 1-ին սյունակում նշված փոխառուի հետ փոխկապակցված և ապահովագրական ընկերության հանդեպ պարտավորություններ ստանձնած բոլոր անձանց անունները (անվանումները): Ընդ որում, մնացած սյունակները լրացվում են, միայն, եթե տվյալ տողում արտացոլված փոխառուի հետ փոխկապակցված անձի հանդեպ ապահովագրական ընկերության ունեցած պահանջները ներառված են 12-րդ աղյուսակում տվյալ փոխառուի համապատասխան տողի 7-րդ սյունակի հանրագումարում: Սույն աղյուսակի տեսքով բերվում է փոխառուի հետ փոխկապակցված անձանց հանդեպ ունեցած պահանջների լրացման ձևի օրինակը:

| Կազմա-կերպության (փոխառուի) անվանումը | Տվյալ փոխառուի հետ փոխկա-պակցված անձանց անունները (անվանում-ները) | Ժամկետա-յին փոխառու-թյան մնացորդը | Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| «Գ» ՍՊԸ | «Բ» ՍՊԸ | 200 000 | 50 000 | 250 000 |
| «Գ» ՍՊԸ | Պետրոսյան Պետրոս | | 100000 | 100000 |

»:

## ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 4 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

61. Թիվ 4 հաշվետվությունը բաղկացած է 2 աղյուսակից:
62. 1-ին աղյուսակում արտացոլվում են ֆիզիկական անձանց գծով, իսկ 2-րդ աղյուսակում՝ իրավաբանական անձանց գծով ապահովագրական գումարների և ապահովագրական հատուցումների վերաբերյալ տեղեկատվություն:
63. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 2-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների մեծությունները (ներառյալ վերաապահովագրողի մասնակցության չափի մեծությունները):
64. Եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված ապահովագրության պայմանագրերով նախատեսված ռիսկերը վերաապահովագրվել են, ապա հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 3-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վերաապահովագրությանը փոխանցվող ռիսկերի (վերաապահովագրական գումարների) մեծությունները:
65. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 4-րդ սյունակում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրական պայմանագրերի գծով ցանկացած դաղարեցումների հետևանքով ապահովագրական գումարների նվազումները, իսկ 5-րդ սյունակում՝ վերաապահովագրողի մասնակցության չափը դրանցում:
66. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 6-րդ սյունակում լրացվում են տարեսկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջ հաշվեգրած ապահովագրական հատուցումների քանակները:

67. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 7-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վճարման ենթակա ապահովագրական հատուցումների (վճարվելիք ապահովագրական հատուցումների գծով կրեդիտորական պարտավորություններ) քանակները:
68. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 8-րդ սյունակում լրացվում են տարեսկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջ հաշվեգրած ապահովագրական հատուցումների մեծությունները:
69. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 9-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում ապահովագրական ընկերությանը հայտարարված պատահարների գծով հաշվեգրած ապահովագրական հատուցումների մեծությունները:
70. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 10-րդ սյունակում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վճարման ենթակա ապահովագրական հատուցումների (վճարվելիք ապահովագրական հատուցումների գծով կրեդիտորական պարտավորություններ) գումարները:
71. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 11-րդ սյունակում արտացոլվում են ոչ պայմանական չփոխհատուցվող այն գումարները (գնահատված վնասի այն մասը), որոնց նվազեցումից հետո հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրվել են ապահովագրական հատուցումներ:
72. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 12-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ոչ պայմանական չփոխհատուցվող գումարների (գնահատված վնասի այն մասը) նվազեցումից հետո վճարման ենթակա ապահովագրական հատուցումների (վճարվելիք ապահովագրական հատուցումների գծով ձևավորված կրեդիտորական պարտավորություններ) մեծությունները:
73. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 13-րդ սյունակում լրացվում են ապահովագրական հատուցումների գծով վերաապահովագրողներից ստացվող տարեսկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջ հաշվեգրած գումարները, իսկ 14-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ապահովագրական հատուցումների գծով պահանջները վերաապահովագրողների նկատմամբ:
74. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակների 15-րդ սյունակում լրացվում են տարեսկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջ հաշվեգրած ապահովագրական հատուցումների գծով ապահովագրական ընկերության ծախսերի գումարները (վնասի չափը և պատճառները որոշելու համար կատարված ծախսերը, վնասի կարգավորման հետ կապված այլ ծախսեր), իսկ 16-րդ սյունակում՝ այդ ծախսերի մեջ վերաապահովագրողների մասնակցության չափի մեծությունները:

## ԳԼՈՒԽ 5. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 5 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

75. Թիվ 5 հաշվետվությունը լրացվում է աճողական տվյալներով: «Նախորդ ժամանակաշրջան» սյունակում լրացվում են ցուցանիշների՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ աճողական տվյալները:

76. Հաշվետվության 1.1.1. կետում լրացվում են ապահովագրական ընկերության կողմից հաշվեգրած ապահովագրավճարների գումարները, իսկ 1.1.2. կետում՝ հաշվեգրված վերաապահովագրավճարների մեծությունները:

77. Հաշվետվության 1.2. կետում լրացվում է չվաստակած ապահովագրավճարների պահուստի մեծության փոփոխությունը:

78. Հաշվետվության 2.1. կետում ցույց են տրվում հատուցումների գծով եկամուտները համաապահովագրողներից: Այս տողը նախատեսված է այն դեպքերի համար, երբ ապահովագրական ընկերությունը, համաապահովագրության պայմանագրի կողմ հանդիսանալով, հատուցումների գծով պահանջ է ձևավորում այլ համաապահովագրողների նկատմամբ:

79. Հաշվետվության 3.1.1. կետում ցույց են տրվում ապահովագրական ընկերության կողմից հաշվեգրած ապահովագրական հատուցումները ոչ կյանքի ապահովագրության գծով, իսկ 3.1.2. կետում՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվեգրված վերաապահովագրողներից ստացվող ապահովագրական հատուցումները: Եթե ապահովագրական ընկերությունը, համաապահովագրության պայմանագրի համաձայն, պարտավորվում է ապահովադրին վճարել ապահովագրական հատուցման ամբողջ գումարը, ապա 3.1.1. կետում ցույց է տրվում հենց այդ գումարը: Համաապահովագրության պայմանագրով նման պատասխանատվության նշված չլինելու դեպքում համաապահովագրողն ապահովադրի նկատմամբ պարտավորությունը ձևավորում է՝ ելնելով իր մասնաբաժնից:

80. 3.2.1. և 3.2.2. կետերը լրացվում են նույն սկզբունքով, ինչ 3.1.1. և 3.1.2. կետերը:

81. Հաշվետվության 4.1.1. կետում ցույց են տրվում ապահովագրական ընկերության կողմից իրականացված բոլոր հատկացումները ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների պահուստին, իսկ 4.1.2. կետում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 02-ի թիվ 312 Ն որոշմամբ հաստատված «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 3/03-ի (այսուհետ՝ կանոնակարգ 3/03) համաձայն ձևավորված պահուստում վերաապահովագրողի:

82. 4.3.1. և 4.3.2. կետերը լրացվում են նույն սկզբունքով, ինչ 4.1.1. և 4.1.2. կետերը:

83. Հաշվետվության 5.1.1., 5.2.1., 5.3.1. կետերում ցույց են տրվում ապահովագրական ընկերության կողմից համապատասխան պահուստներից իրականացված բոլոր վերադարձները: Մասնավորապես՝ 5.1.1. կետում լրացվում են ինչպես ապահովագրական հատուցումների վճարման նպատակով պահուստից

84. 17-րդ կետում արտացոլվում են շահաբաժինների այն գումարները, որոնք վճարվում են տվյալ հաշվետու տարվա ֆինանսական արդյունքներից:

## ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՊԱՌՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 6 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

85. Թիվ 6 հաշվետվությունը բաղկացած է 3 աղյուսակից: Հաշվետվությունը լրացվում է աճողական տվյալներով: Հաշվետվության 1-ին և 3-րդ աղյուսակներում համապատասխանաբար լրացվում են թիվ 5 հաշվետվության 1-ին և 3-րդ կետերում նշված ցուցանիշները՝ իրավաբանական անձանց մասով, ըստ ապահովագրության յուրաքանչյուր դասի:

86. Հաշվետվության 1-ին աղյուսակի 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ սյունակներում արտացոլվում են իրավաբանական անձանց գծով (ըստ դրանց ճյուղային պատկանելության) հաշվեգրած ապահովագրավճարների մեծությունները, իսկ 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ սյունակներում՝ իրավաբանական անձանց գծով (ըստ դրանց ճյուղային պատկանելության) հաշվեգրած ապահովագրավճարներից վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների մեծությունները:

87. Հաշվետվության 2-րդ աղյուսակի 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ սյունակներում արտացոլվում են իրավաբանական անձանց գծով (ըստ դրանց ճյուղային պատկանելության) հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների մեծությունները, իսկ 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ սյունակներում՝ իրավաբանական անձանց գծով (ըստ դրանց ճյուղային պատկանելության) հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներում վերաապահովագրողների մասնակցության չափի մեծությունները (վերաապահովագրական գումարները):

88. Հաշվետվության 3-րդ աղյուսակի 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ սյունակներում արտացոլվում են իրավաբանական անձանց գծով (ըստ դրանց ճյուղային պատկանելության) հաշվեգրած ապահովագրական հատուցումների գումարները, իսկ 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ սյունակներում՝ իրավաբանական անձանց գծով (ըստ դրանց ճյուղային պատկանելության) վերաապահովագրողներից ստացվող գումարներն ապահովագրական հատուցումներում:

## ԳԼՈՒԽ 7. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆԸ ՄՆԱՑԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 7 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

89. Թիվ 7 հաշվետվությունը բաղկացած է 4 աղյուսակից:
90. Հաշվետվության 1-ին և 2-րդ աղյուսակներում լրացվում են հաշվետու օրվա դրությամբ ապահովագրական ընկերության ակտիվներն ու պարտավորությունները՝ ըստ վերջիններիս մարմանը մնացած ժամկետների, իսկ 3-րդ և 4-րդ աղյուսակներում՝ ըստ ակտիվների և պարտավորությունների պայմանագրային ժամկետների:
91. Այն ակտիվները, որոնք ցպահանջ չեն և չունեն հստակ սահմանված մարման ժամկետներ, համարվում են անժամկետ և արտացոլվում են «Անժամկետ» սյունակում:
92. Եթե ապահովագրական ընկերության բանկային հաշիվների միջոցներն ամբողջությամբ (կամ մասամբ) սառեցվել (դեպոնացվել) են որոշակի ժամանակով, ապա սառեցված (դեպոնացված) մասը համարվում է ժամկետային միջոց և արտացոլվում է համապատասխան (պայմանագրով նախատեսված սառեցման ժամկետով) ժամկետային սյունակներում: Եթե այդ միջոցները սառեցվել (դեպոնացվել) են անժամկետ, ապա դրանք արտացոլվում են «Անժամկետ» սյունակում:
93. Թիվ 7 հաշվետվության մեջ ակտիվների կազմում չեն ընդգրկվում հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները, վերջիններիս գծով կատարված կապիտալ ներդրումները, արագամաշ առարկաները, դրանց ձեռքբերման նպատակով կատարված կանխավճարները, ինչպես նաև հետագայում ծախսերով ձևակերպման ենթակա կանխավճարները:
94. Թիվ 7 հաշվետվության մեջ ակտիվներն արտացոլվում են առանց դրանց գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստների նվազեցման:
95. «Կանխիկ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» տողում արտացոլվում են կանխիկ դրամական միջոցները և վճարային փաստաթղթերը (կանխիկ դրամը դրամարկղում, կանխիկ դրամը ճանապարհին, կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը), որոնց հանրագումարը լրացվում է միայն «Ցպահանջ» սյունակում:
96. «Հաշիվներ բանկերում» տողում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության բանկերում բացված բանկային հաշիվների միջոցները, բանկերում սառեցված (դեպոնացված) միջոցները:
97. «Պահանջներ ապահովադիրների նկատմամբ» տողում արտացոլվում են ապահովադիրների նկատմամբ պահանջները: Ընդ որում, ապահովագրության պայմանագրով պայմանագրի գործողության ընթացքում տարբեր ժամկետներում վճարումներ նախատեսված լինելու դեպքում պահանջի ժամկետ է համարվում պայմանագրի ավարտի ժամկետը:

98. «Պահանջներ ապահովագրական ընկերությունների նկատմամբ» տողում ցույց են տրվում ապահովագրական ընկերություններից վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ստացվելիք գումարները, համաապահովագրության գծով ստացվելիք ապահովագրավճարները, ապահովագրական հատուցումների գումարները և այլ նմանատիպ պահանջներ ապահովագրողների նկատմամբ:

99. «Պահանջներ ապահովագրական միջնորդների նկատմամբ» տողում արտացոլվում են ապահովագրական և վերաապահովագրական միջնորդներից ստացվելիք բոլոր գումարները:

100. «Պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ» տողում արտացոլվում են դադարեցված պայմանագրերի համաձայն վերաապահովագրողներից ստացվելիք վերաապահովագրավճարները, վերաապահովագրողների նկատմամբ հատուցման գծով պահանջները և վերաապահովագրության գծով այլ պահանջները:

101. «Պահանջներ Հայաստանի Հանրապետության Կառավարության նկատմամբ» տողում արտացոլվում են բյուջեի նկատմամբ դեբիտորական պարտքերը, հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով հաշվարկված հարկային պարտավորություններից ավել վճարված կանխավճարները (գերավճարները): Ընդ որում, կանխավճարներն արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված` հարկերի վճարման վերջին ժամկետի լրանալուն մնացած օրերի քանակին համապատասխանող սյունակում:

102. «Պահանջներ Հայաստանի Հանրապետության բանկերի նկատմամբ» տողում լրացվում են բանկերի նկատմամբ պահանջներն ակրեդիտիվների և երաշխավորությունների, ավանդների գծով, դեբիտորական պարտքերը, բանկերի կողմից թողարկված արժեթղթերը (բացառությամբ` բաժնետոմսերի), բանկերի հետ այլ գործառնությունների գծով պահանջները:

103. «Պահանջներ այլ բանկերի նկատմամբ» տողում լրացվում են ոչ ռեզիդենտ բանկերում, նրանց մասնաճյուղերում և Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող դուստր բանկերում բացված հաշիվների միջոցները, բանկերում դեպոնացված միջոցները, բանկերի նկատմամբ պահանջներն ակրեդիտիվների և երաշխավորությունների գծով, դեբիտորական պարտքերը, բանկերի կողմից թողարկված արժեթղթերը (բացառությամբ` բաժնետոմսերի), բանկերի հետ այլ գործառնությունների գծով պահանջները:

104. «Հաշվարկված ստացվելիք տոկոսներ» տողում լրացվում են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ստացվելիք բոլոր տեսակի տոկոսները:

105. «Այլ ակտիվներ» տողում արտացոլվում են ածանցյալ գործիքները (հաշվեկշռում ճանաչված ակտիվային մասով), ստացվելիք շահաբաժինները, առևտրական նպատակով պահվող, վաճառքի համար մատչելի, բաժնեմասնակցության և ինքնարժեքի մեթոդներով հաշվառվող ներդրումները ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կանոնադրական կապիտալներում և այլ պահանջները, որոնք արտացոլված չեն նախորդ տողերում:

106. Այն ակտիվները, որոնք հաշվեկշռում հաշվառվում են զեղչատոկոսով կամ հավելավճարով (օրինակ՝ պետական գանձապետական արժեթղթեր), այս հաշվետվության մեջ ընդգրկվում են հաշվեկշռային արժեքով՝ հաշվի առած զեղչատոկոսը կամ հավելավճարը, ինչպես նաև համապատասխան ճշգրտման հաշիվները:

107. Պարտավորությունների «ժամկետանց» սյունակը լրացվում է այն պարտավորությունների մասով, որոնք չեն կատարվել ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետում, բացառությամբ այն պարտավորությունների, որոնց վերաբերյալ վեճերը քննվում են ընդհանուր իրավասության կամ միջնորդ դատարանում և այն պարտավորությունների, որոնք սահմանված ժամկետում չեն կատարվել ոչ ապահովագրական ընկերության մեղքով:

108. Պարտավորությունների «ցպահանջ» սյունակում լրացվում են հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ցպահանջ, իսկ «Անժամկետ» սյունակում՝ մարման սահմանված ժամկետ չունեցող միջոցները: Ընդ որում, դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվող գործերով պարտավորությունները համարվում են ցպահանջ և լրացվում են «ցպահանջ» սյունակում:

109. «Պարտավորություններ ապահովադիրների նկատմամբ» տողում արտացոլվում են ապահովադիրներին վճարվելիք հատուցումները, նրանց հետ վերադարձվող ապահովագրավճարների գումարները, ապահովագրավճարների գծով կանխավճարները և ապահովադիրներին վճարվելիք այլ գումարներ:

110. «Պարտավորություններ ապահովագրական ընկերությունների նկատմամբ» տողում արտացոլվում են համաապահովագրության գծով վճարվելիք հատուցումները, փոխանցվելիք ապահովագրավճարները և այլ նմանատիպ պարտավորությունները:

111. «Պարտավորություններ ապահովագրական միջնորդների նկատմամբ» տողում արտացոլվում են ապահովագրական և վերաապահովագրական միջնորդներին վճարման ենթակա բոլոր գումարները:

112. «Պարտավորություններ վերաապահովագրական ընկերությունների նկատմամբ» տողում արտացոլվում են վերաապահովագրության փոխանցված ռիսկերի գծով վճարվելիք վերաապահովագրավճարները և այլ գումարներ:

113. «Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության նկատմամբ» տողում լրացվում են գանձապետարանից ստացված վարկերը, կրեդիտորական պարտքերը բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով և Հայաստանի Հանրապետության Կառավարության նկատմամբ այլ պարտավորությունները:

114. «Պարտավորություններ ապահովագրական ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերի գծով» տողում լրացվում են ապահովագրական ընկերության կողմից թողարկված բոլոր տեսակի արժեթղթերի գումարները, բացառությամբ՝ բաժնետոմսերի:

115. «Այլ պարտավորություններ» տողում արտացոլվում են ածանցյալ գործիքները (հաշվեկշռում ճանաչված պարտավորությունների մասով), վճարման ենթակա շահաբաժինները, ներքին և արտաքին կրեդիտորական պարտքերը և այլ ֆինանսական պարտավորությունները, որոնք չեն ընդգրկվել վերը նշված տողերում: Այս տողում չեն ներառվում տեխնիկական պահուստները:

116. «Արտահաշվեկշռային պայմանական պարտավորություններ» տողում լրացվում են պայմանական պարտավորությունները՝ ապահովագրական գումարների, տրամադրված երաշխավորությունների, երաշխիքների մեծությունները:

117. ««Խոշոր» պարտավորություններ» տողում լրացվում են այն բոլոր պարտավորությունների գումարները, որոնք, առանձին վերցված, կազմում են ապահովագրական ընկերության ընդհանուր պարտավորությունների (բացառությամբ՝ արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների) 5 և ավելի տոկոսը՝ առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:

## ԳԼՈՒԽ 8. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 8 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

118. Թիվ 8 հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր փոփոխության դեպքում:

119. «Ապահովագրական ընկերության կազմակերպական-իրավական ձև» մասում նշվում է՝ ապահովագրական ընկերության բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն լինելը:

120. «Ամսաթիվ» մասում նշվում է կանոնադրական կապիտալի համալրման կամ փոփոխության ամսաթիվը, իսկ «Կանոնադրական կապիտալի հայտարարման ամսաթիվ» մասում՝ հայտարարման ամսաթիվը:

121. Թիվ 8 հաշվետվությունը լրացվում է՝

ա) Բաց բաժնետիրական ընկերություն հանդիսացող ապահովագրական ընկերությունների կողմից: 1% և ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է առանձին տողով: 1%-ից քիչ մասնակցություն ունեցող բաժնետերերի բաժնեմասը լրացվում է երկու տողով, ընդ որում՝ ռեզիդենտների մասնակցությունը լրացվում է առաջին տողով, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ երկրորդ տողով:

բ) Փակ բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող ապահովագրական ընկերությունների բոլոր փայատերերի (բաժնետերերի, անդամների) վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է առանձին տողով:

122. Եթե մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա «Սեփականության ձևը» սյունակում անհրաժեշտ է նշել «ֆիզիկական անձ» բառերը, իսկ եթե մասնակիցը իրավաբանական անձ է և իր բաժնեմասերի 50%-ը և ավելին պատկանում է պետությանը՝ «պետական մասնակցությամբ», մնացած դեպքերում՝ «ոչ պետական» բառերը:

123. «Բաժնետոմսի տեսակը (սովորական, արտոնյալ)» սյունակը լրացվում է միայն բաժնետիրական ընկերությունների համար «Սովորական» կամ «Արտոնյալ» բառերով` կախված բաժնետոմսի տեսակից:

Սահմանափակ պատասխանատվությամբ ապահովագրական ընկերությունների համար «Բաժնետոմսի տեսակը (սովորական, արտոնյալ)» սյունակը չի լրացվում:

124. Բաժնետիրական ընկերությունների համար «Բաժնետոմսերի դեպոզիտարիայում գրանցման օրը/Կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը» սյունակում լրացվում է բաժնետոմսերի դեպոզիտարիայում կամ ապահովագրական ընկերությունների բաժնետերերի ռեեստրում գրանցման օրը, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ապահովագրական ընկերությունների համար` Կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը: «Ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ)» սյունակը լրացվում է «Ռեզիդենտ» կամ «Ոչ ռեզիդենտ» բառերով` կախված մասնակցի ռեզիդենտությունից: «Ռեզիդենտ» և «ոչ ռեզիդենտ» հասկացությունների սահմանումները տրված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հունվարի 14-ի թիվ 01 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկում»:

125. 7-րդ սյունակում լրացվում է կանոնադրական կապիտալի փաստացի մեծությունը` փոփոխությունը (համալրում և(կամ) նվազեցում) կատարելու օրվա (ներառյալ փոփոխությունը կատարելու օրը) դրությամբ:

## ԳԼՈՒԽ 9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 9 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

126. Թիվ 9 հաշվետվությունում լրացվում են ընդհանուր կապիտալի տարրերի մեծությունները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, այդ մեծությունների փոփոխությունները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում և դրանց մեծությունները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ: Հաշվետվությունը լրացվում է համաձայն կանոնակարգ 3/02-ի:

## «ԳԼՈՒԽ 10. ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 10 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

127. Թիվ 10 հաշվետվությունը բաղկացած է երկու հատվածից:

128. Հաշվետվության 1-ին հատվածում ապահովագրական ընկերությունը ներկայացնում է իր և հաշվետվության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն: Երկրորդ հատվածում ապահովագրական ընկերությունը ներկայացնում է վերաապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվետվության առաջին հատվածը հաշվետվության Հեդեր (HEADER) տարրի ներքո ներառված տարրերի ամբողջությունն է: Հաշվետվության երկրորդ հատվածը հաշվետվության Բոդի (BODY) տարրի ներքո ներառված տարրերի ամբողջությունն է:

129.1.Հաշվետվության առաջին հատվածի ԻնշուրերԿոդ (INSURERCODE) տարրի ներքո լրացվում է ապահովագրական ընկերության կոդը, որը վերջինիս է տրամադրվել Կենտրոնական բանկի կողմից:

129.2. Հաշվետվության առաջին հատվածի ԻնշուրերՆեյմ (INSURERNAME) տարրի ներքո լրացվում է ապահովագրական ընկերության անվանումը:

129.3. ՌետռնԿոդ (RETURNCODE) և ՌետռնՆեյմ (RETURNNAME) տարրերի ներքո լրացվում են համապատասխանաբար հաշվետվության համարը և անվանումը, մասնավորապես թիվ 10 հաշվետվության համար այս տարրերի արժեքներն են համապատասխանաբար *10* և *Վերաապահովագրության վերաբերյալ:*

130. ՊերիոդՖրոմ (PERIODFROM) և ՊերիոդԵնդ (PERIODEND) տարրերի ներքո լրացվում է հաշվետու ժամակաշրջանի սկզբի և ավարտի ամսաթիվը օր/ամիս/տարի ֆորմատով: Եթե հաշվետվությունը ներկայացվում է 2010 թվականի առաջին եռամսյակի համար, ապա այս տարրերի համար արժեքները համապատասխանաբար կլինեն 01/01/2010 և 31/03/2010:

131. Վեր (VER) տարրի ներքո լրացվում է հաշվետվության տարբերակը: Եթե հաշվետվությունը ուղարկվում է առաջին անգամ, ապա Վեր (VER) տարրի արժեքը կլինի 1, իսկ հետագա բոլոր ճշգրտված հաշվետվությունների համար տարրի արժեքը կմեծանա 1-ով, մասնավորապես 2-րդ ուղարկված հաշվետվության համար այս տարրի արժեքը կլինի 2: Սայնեդ (SIGNED) և ԼՆԳ (LNG) տարրերի արժեքները միշտ հաստատուն են ` null և hy_AM:

132. Յուրաքանչյուր պայմանագրի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է առանձին Ռոու (ROW) տարրերի ներքո, որոնց մեջ ներառվող տարրերի լրացման կարգը ներկայացված է սույն կանոնակարգի 133-140 կետերում: Հաշվետվությունում արտացոլվում են այն բոլոր պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք կնքվել են հաշվետու ժամանակաշրջանում, կամ որոնց գործողության ժամկետը դադարել է հաշվետու ժամանակշրջանում:

133.1. ԱյԴի (ID) տարրում ներկայացվում է տողի հերթական համարը (1,2,3……..):

133.2. ՌեինշուրանսԿոնտրակտԱյԴԻ (REINSURANCE_CONTRACT_ID) տարրում ներկայացվում է վերաապահովագրության պայմանագրի համարը:

133.3. ԻնշուրանսԿլաս (INSURANCE_CLASS) տարրում ներկայացվում է ապահովագրության դասի կոդը, որին վերաբերում է վերաապահովագրության պայմանագիրը: Ապահովագրության դասերի կոդերը ներկայացված են հավելված 10-ի աղյուսակ 1-ում:

134. ՌեինշուրանսԿոմպանիՆեյմ (REINSURANCE_COMPANY_NAME) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության անվանումը: Ընկերության անվանումը պետք է ընտրել Կենտրոնական բանկի կողմից տրված ցուցակից: Եթե ապահովագրական ընկերությունը պայմանագիր է կնքել այնպիսի վերաապահովագրական ընկերության հետ, որը բացակայում է ներկայացված ցուցակում, ապա ապահովագրական ընկերությունը այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին, որը ծանուցում ստանալուց հետո ապահովագրական

ընկերությանն է տրամադրում թարմացված ֆայլերը: Վերաապահովագրական ընկերությունների ցանկը ներկայացվում է Կենտրոնական բանկի կողմից տրված Էքս-Էս-Դի (xsd) ֆորմատի ֆայլերում:

135.1. Ստանդ Փուրզ Ռեյտինգ (STAND_POORS_RATING) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության վարկանիշը՝ տրված Ստանդարտ ընդ Փուրզ վարկանիշային կազմակերպության կողմից: Ընկերության վարկանիշը ընտրվում է նախատեսված ցուցակից, որը տրվում է Կենտրոնական բանկի կողմից: Եթե ընկերությունը չունի վարկանիշ, ապա նշվում է «X»: Ստանդարտ ընդ Փուրզ վարկանիշային կազմակերպության վարկանիշային սանդղակը ներկայացված է հավելված 10-ի աղյուսակ 2-ում:

135.2. Ֆիտչ Ռեյտինգ (FITCH_RATING) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության վարկանիշը՝ տրված Ֆիտչ վարկանիշային կազմակերպության կողմից: Ընկերության վարկանիշը ընտրվում է նախատեսված ցուցակից, որը տրվում է Կենտրոնական բանկի կողմից: Եթե ընկերությունը չունի վարկանիշ, ապա նշվում է «X»: Ֆիտչ վարկանիշային կազմակերպության վարկանիշային սանդղակը ներկայացված է հավելված 10-ի աղյուսակ 2-ում:

135.3. Մուդիզ Ռեյտինգ (MOODYS_RATING) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության վարկանիշը՝ տրված Մուդիզ վարկանիշային կազմակերպության կողմից: Ընկերության վարկանիշը ընտրվում է նախատեսված ցուցակից, որը տրվում է Կենտրոնական բանկի կողմից: Եթե ընկերությունը չունի վարկանիշ, ապա նշվում է «X»: Մուդիզ վարկանիշային կազմակերպության վարկանիշային սանդղակը ներկայացված է հավելված 10-ի աղյուսակ 2-ում:

135.4. Ա.Մ.Բեստ Ռեյտինգ (A.M.BEST_RATING) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության վարկանիշը՝ տրված Ա. Մ. Բեստ վարկանիշային կազմակերպության կողմից: Ընկերության վարկանիշը ընտրվում է նախատեսված ցուցակից, որը տրվում է Կենտրոնական բանկի կողմից: Եթե ընկերությունը չունի վարկանիշ, ապա նշվում է «X»: Ա. Մ. Բեստ վարկանիշային կազմակերպության վարկանիշային սանդղակը ներկայացված է հավելված 10-ի աղյուսակ 2-ում:

136.1. Ռեինշուրանս Սայթ (REINSURANCE_SITE) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության կայքը, ընդ որում www. նշելը պարտադիր է:

136.2. Ռեինշուրանս Քաունտրի (REINSURANCE_COUNTRY) և Ռիինշուրանս Ստեյտ Ռիգիստրեյտեդ Դատա (REINSURANCE_STATE_REGISTRATED_DATA) տարրերում ներկայացվում են համապատասխանաբար վերապաահովագրական ընկերության երկրի եռանիշ ISO կոդը և պետական գրանցման համարը:

137.1. Ռեզիդենտ Բրոքեր Նեյմ (REZIDENT_BROKER_NAME) տարրում ներկայացվում է ապահովագրողի ռիսկերը տվյալ վերաապահովագրողին փոխանցած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ապահովագրական բրոքերի Կենտրոնական բանկի կողմից

տրված կոդը: Եթե բրոքերները մեկից ավելին են, ապա կոդերը տարանջատվում են բացատներով:

137.2. Նոն Ռեզիդենտ Բրոքեր Նեյմ (NON_REZIDENT_BROKER_NAME) տարրում ներկայացվում է ապահովագրողի ռիսկերը տվյալ վերաապահովագրողին փոխանցած օտարերկրյա ապահովագրական բրոքերի Կենտրոնական բանկի կողմից տրված կոդը: Եթե բրոքերները մեկից ավելին են, ապա կոդերը տարանջատվում են բացատներով:

138.1. Ռեինշուրանս Կոնտրակտ Թայփ (REINSURANCE_CONTRACT_TYPE) տարրում ներկայացվում է վերաապահովագրության պայմանագրի տեսակի կոդը: Վերաապահովագրության պայմանագրի տեսակների կոդերը ներկայացված են հավելված 10-ի աղյուսակ 3-ում:

138.2. Ռեինս Կոնտր ԲեգԴեյտ (REINS_CONTR_BEGDATE) և Ռեինս Կոնտր ԷնդԴեյտ (REINS_CONTR_ENDDATE) տարրերում ներկայացվում են համապատասխանաբար վերաապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի սկզբի և ավարտի ամսաթվերը օր/ամիս/տարի ֆորմատով:

139.1. Ռիինշուրանս օբջեկտս քաունտ (REINSURANCE_OBJECTS_COUNT) տարրում ներկայացվում է վերաապահովագրված օբյեկտների քանակը ամբողջ թվերով:

139.2. Ռիինշուրանս Սամ (REINSURANCE_SUM) տարրում ներկայացվում է տվյալ վերաապահովագրողի մոտ վերաապահովագրված օբյեկտների վերաապահովագրական գումարը (դրական, ստորակետից հետո անհրաժեշտ քանակությամբ նիշերի ճշգրտությամբ, հազար դրամներով):

139.3. Նետ Ռեինշուրանս (NET_REINSURANCE_PREMIUM) տարրում ներկայացվում է տվյալ վերաապահովագրողին փոխանցված վերաապահովագրավճարները (դրական, ստորակետից հետո անհրաժեշտ քանակությամբ նիշերի ճշգրտությամբ, հազար դրամներով):

139.4. Ռեինշուրանս Քոմպենսեյշն (REINSURANCE_COMPENSATION) տարրում տվյալ վերաապահովագրողից ստացված կամ ստացվելիք վերաապահովագրական հատուցումները (դրական, ստորակետից հետո անհրաժեշտ քանակությամբ նիշերի ճշգրտությամբ, հազար դրամներով):

139.5. Քոնտրակտ Ստատուս (CONTRACT_STATUS) տարրում ներկայացվում է, թե արդյոք գործող է տվյալ վերաապահովագրողի հետ կնքած պայմանագիրը: Եթե պայմանգիրը գործող է, ապա տարրի արժեքն է Y, իսկ եթե ոչ, ապա՝ N:

140. Հաշվետվությունը ներկայացնելիս վերը նշված տարրերի հերթականությունը պահպանելը պարտադիր է և այլ հերթականությամբ ներկայացված հաշվետվությունը համարվում է չներկայացված:

## ԳԼՈՒԽ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԻՆՉԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ ՄՆԱՑԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 11 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

141. Թիվ 11 հաշվետվությունը բաղկացած է 2 աղյուսակից:

142. Հաշվետվության 1-ին աղյուսակում ներկայացվում է գործող ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսաթվի դրությամբ տեղեկատվություն` ըստ դրանց գործողության ավարտին մնացած ժամկետների և ապահովագրական գումարների: Հաշվետվության 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ 12-րդ, 14-րդ և 16-րդ սյունակներում լրացվում է յուրաքանչյուր դասի գծով կնքված (հաշվետու ամսաթվի դրությամբ գործողության ավարտին մնացած ժամկետներին համապատասխան սյունակում) պայմանագրերի քանակը: Ընդ որում, 2-րդ սյունակում լրացվում են հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողության ավարտին 1-ից մինչև 30 օր (30 օրը ներառյալ) ժամկետ մնացած պայմանագրերի քանակները, 4-րդ սյունակում` 31-օրից մինչև 3 ամիս (հաշվետու ամսաթվից հաշված) և այլն: 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ և 17-րդ սյունակներում լրացվում են նախորդ սյունակներում արտացոլված համապատասխան պայմանագրերի գծով ստանձնած պատասխանատվության չափերի մեծությունները (ապահովագրական գումարները):

143. Հաշվետվության 2-րդ աղյուսակում ներկայացվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվություն` ըստ դրանց պայմանագրային ժամկետների: Հաշվետվության 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ 12-րդ, 14-րդ և 16-րդ սյունակներում լրացվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակները: Օրինակ` 2-րդ սյունակում լրացվում են 30 օր պայմանագրային ժամկետ ունեցող ապահովագրության պայմանագերի քանակները, ընդ որում` օրերի հաշվարկն սկսվում է ապահովագրական ընկերության կողմից ռիսկն ստանձնելու օրվանից:

## ԳԼՈՒԽ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 12 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

144. Թիվ 12 հաշվետվության մեջ արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրական ընկերությանը ապահովագրական պատահարների հատուցման վերաբերյալ ներկայացված պահանջների (հայտերի), մասնավորապես կնքված ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ ապահովագրական ընկերության կողմից սահմանված կարգով ներկայացված հայտերի քանակների և գումարների վերաբերյալ տեղեկատվությունը:

145. Հաշվետվության 6-րդ սյունակում լրացվում է նախորդող ժամանակաշրջաններում հայտարարված ու մերժված, սակայն հաշվետու ժամանակաշրջանում վերաբացված պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը:

146. 3-րդ, 5-րդ, 7-րդ սյունակները լրացվում են՝ հիմնվելով յուրաքանչյուր պահանջի (հայտի) ապահովագրողի նախնական գնահատված մեծության վրա: Այն դեպքում, երբ ներկայացված պահանջի (հայտի) մեծությունը հայտնի (գնահատված) չէ, ապա այդ սյուներում լրացվում են ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների մեծությունները:

147. Հաշվետվության 8-րդ և 9-րդ սյունակներում լրացվում է տեղեկատվություն ինչպես բավարարված, այնպես էլ մերժված պահանջների (հայտերի) գծով: Հայտը համարվում է կարգավորված ապահովագրական ընկերության կողմից հայտը բավարարելու և հատուցման չափը որոշելու, հատուցումը մերժելու կամ օրենքի ու այլ իրավական ակտերին համապատասխան՝ պահանջը անհետևանք թողնելու մասին որոշումը ընդունելու, կամ ապահովադրի կողմից ապահովագրական հատուցումից գրավոր հրաժարվելու օրվանից:

148. Եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել հայտերի մեծությունների վերաչափումներ, ապա 3-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ սյունակներում արտացոլվում են վերաչափված հայտերի մեծությունները:

149. 10-րդ և 11-րդ սյունակներում համապատասխանաբար լրացվում են հայտերի վերաչափման հետևանքով դրանց մեծությունների աճերը և նվազումները:

## ԳԼՈՒԽ 13. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱՅԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 13 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

150. Թիվ 13 հաշվետվության մեջ արտացոլվում են այն պահանջների գումարները, որոնք ծագել են սուբրոգացիայի իրավունքի կիրառման հետևանքով:

151. 2-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ սուբրոգացիայի հետևանքով առկա պահանջների գումարների մեծությունները, 3-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում առաջացած նոր պահանջների գումարների մեծությունները, 4-րդ սյունակում՝ պահանջների ավելացումը՝ դրանց վերաչափման (պահանջի գումարի ճշգրտման հաշվին, ընդ որում, այս սյան մեջ արտացոլվում են ինչպես ժամանակաշրջանի սկզբի դրությամբ առկա պահանջների, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում առաջացած նոր պահանջների վերաչափումից արժեքի աճը), 5-րդ սյունակում՝ պահանջների նվազման գումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված վճարումների հաշվին, 6-րդ սյունակում՝ պահանջների նվազման գումարը, որն առաջացել է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեկշռից այդ պահանջների դուրսգրումներից, 7-րդ սյունակում՝ պահանջների վերաչափման արդյունքում առաջացած նվազման գումարը: 8-րդ սյունակում արտացոլվում է սուբրոգացիայի հետևանքով ծագած պահանջների ընդհանուր մեծությունը

## ԳԼՈՒԽ 14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 14 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

152. Թիվ 14 հաշվետվությունը բաղկացած է երկու աղյուսակից: 1-ին աղյուսակը ներառում է տեղեկատվություն ապահովագրական ընկերության հիմնական գործունեության և կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդումների վերաբերյալ: 2-րդ աղյուսակը ներառում է տեղեկատվություն ոչ ռեզիդենտների նկատմամբ պահանջների և ոչ ռեզիդենտների նկատմամբ պարտավորությունների վերաբերյալ՝ ըստ առանձին գործիքների:

152.1 Սույն հաշվետվության լրացման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը: Հաշվետվությունը լրացվում է հազար դրամներով: Արտարժույթով կատարված գործառնությունները լրացվում են համապատասխան սյան մեջ՝ դրամական արտահայտությամբ: Հաշվետվության մեջ տվյալները լրացվում են միայն հաշվետվության ազատ վանդակներում: Հաշվետվությունում կյանքի և ոչ կյանքի ապահովագրությանը և վերաապահովագրությանը վերաբերող գործառնությունները ըստ դասերի ներկայացվում են առանձին-առանձին:

153. 1-ին աղյուսակի 1-ին սյունակում ներկայացվում են հաշվարկված ապահովագրավճարները ոչ կյանքի ապահովագրության և կյանքի ապահովագրության գծով:

153.1 «Վաստակած ապահովագրավճարներ ուղղակի ապահովագրության գծով» սյունակում պետք է ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում ընկերության կողմից ոչ ռեզիդենտների հետ կնքած ապահովագրության և համաապահովագրության պայմանագրերով ապահովագրավճարների գումարներն ըստ ապահովագրության դասերի:

154. «Վճարման ենթակա (հաշվեգրված) ապահովագրական հատուցումներ ուղղակի ապահովագրության գծով» սյունակում պետք է ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում ապահովագրության և համաապահովագրության պայմանագրերով ընկերության կողմից ոչ ռեզիդենտներին վճարման նպատակով հաշվեգրած հատուցումներն ըստ ապահովագրության դասերի:

155. «Վերաապահովագրության փոխանցված ռիսկերի գծով հաշվարկված վերաապահովագրավճարներ՝ ոչ ռեզիդենտներին» սյունակում պետք է ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վերաապահովագրության փոխանցված ռիսկերի գծով ոչ ռեզիդենտներին փոխանցվելիք հաշվարկված վերաապահովագրավճարների գումարն ըստ ապահովագրության դասերի: Հաշվարկված վերաապահովագրավճարներն ապահովագրական պայմանագրի գործողության ժամանակահատվածում հաշվարկած վերաապահովագրավճարներն են յուրաքանչյուր եռամսյակի համար: Հաշվարկված վերաապահովագրավճարը հաշվարկվում է համախառն վերաապահովագրավճարներից նվազեցնելով վերաապահովագրումից ստացվելիք բոնուսներն ու միջնորդավճարները, դադարեցված պայմանագրերի գծով վերադարձված գումարները և տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխությունները:

156. «Վերապահովագրության փոխանցված ռիսկերի գծով վնասի բաժնի հատուցումներ և այլ մուտքեր՝ ոչ ռեզիդենտներից» սյունակում ցույց են տրվում վերապահովագրության փոխանցված ռիսկերի գծով հաշվետու ժամանակաշրջանում հաշվեգրված հատուցումները ոչ ռեզիդենտ վերապահովագրողների գծով, «Վերապահովագրության ընդունված ռիսկերի գծով վնասի բաժնի հատուցումներ և այլ ելքեր՝ ոչ ռեզիդենտներին» սյունակում ցույց են տրվում ոչ ռեզիդենտից հաշվետու ժամանակաշրջանում վերապահովագրության ընդունված ռիսկերի գծով հաշվեգրված հատուցումները:

157. «Վերապահովագրության գծով կոմիսիոն վարձատրություններ՝ ոչ ռեզիդենտներից» սյունակում ցույց են տրվում ոչ ռեզիդենտ վերապահովագրողներից ստացված կոմիսիոն վարձատրությունները, միջնորդավճարները և բոնուսները:

158. «Վերապահովագրության գծով կոմիսիոն վարձատրություններ ոչ ռեզիդենտներին» սյունակում ցույց են տրվում ոչ ռեզիդենտ վերապահովագրողներին տրված կոմիսիոն վարձատրությունները, միջնորդավճարները և բոնուսները:

159. «Ոչ ռեզիդենտների հետ գործող պայմանագրերի քանակը» հոդվածում (9-րդ սյունակ) ցույց է տրվում հաշվետու ժամանակահատվածում ոչ ռեզիդենտների հետ գործող պայմանագրերի քանակը:

160. «Ոչ ռեզիդենտների հետ հաշվետու եռամսյակում կնքված պայմանագրերի քանակը» սյունակում ցույց է տրվում հաշվետու ժամանակահատվածում ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի քանակը:

161. «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում ոչ ռեզիդենտի մասնակցություն (%)» հոդվածում նշվում է կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտ ներդրողների ընդհանուր մասնակցության տեսակարար կշիռը, այնուհետև առանձին-առանձին, ըստ յուրաքանչյուր ոչ ռեզիդենտ ներդրողի, նշվում է կանոնադրական կապիտալում մասնակցության բաժինը՝ տեսակարար կշիռների նվազման կարգով: «Ոչ ռեզիդենտներին հայտարարված շահաբաժիններ» հոդվածում ցույց են տրվում հաշվետու ժամանակաշրջանում հայտարարված շահաբաժինների ոչ ռեզիդենտների մասնաբաժինը:

162. 2-րդ աղյուսակը ներառում է ապահովագրական ընկերության արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Ինչպես ակտիվները, այնպես էլ պարտավորությունները պետք է ներկայացվեն ըստ առանձին գործիքների: Ընդ որում, ակտիվների և պարտավորությունների նվազումը նշվում է բացասական նշանով, իսկ աճը՝ դրական: Ինչպես ակտիվները, այնպես էլ պարտավորությունները տարանջատվում են ըստ ժամկետայնության՝ կարճաժամկետ և երկարաժամկետ: Ինչպես ակտիվներում, այնպես էլ պարտավորություններում հաշվեգրված, բայց չվճարված տոկոսավճարները ներկայացվում են գործիքի հետ միասին: «Ակտիվներում» կամ «Պարտավորություններում» չեն ներառվում չվաստակած ապահովագրավճարների պահուստը

163. Կարճաժամկետ բաժնում «Պարտատոմսեր, պարտամուրհակներ և այլ շուկայական գործիքներ» տողում լրացվում են այն պարտքային արժեթղթերի հետ կապված գործառնությունները, որոնց թողարկման ժամկետայնությունը մինչև 1 տարի է: 1 տարուց ավելի ժամկետայնությամբ պարտքային արժեթղթերի հետ կապված գործառնությունները նշվում են երկարաժամկետ բաժնի «Պարտատոմսեր, պարտամուրհակներ և այլ շուկայական գործիքներ» տողում: Ընդ որում, պարտքային արժեթղթերը ըստ ժամկետայնության դասակարգելիս պետք է հաշվի առնել ոչ թե մինչև մարումը մնացած ժամկետը, այլ թողարկման սկզբնական ժամկետայնությունը: Կարճաժամկետ և երկարաժամկետ բաժիններում ակտիվների (պարտավորությունների) «Վարկեր և փոխառություններ» տողում լրացվում է ոչ ռեզիդենտներին տրամադրված (ոչ ռեզիդենտներից ստացած) վարկերը և փոխառությունները՝ կախված ժամկետայնությունից: Կարճաժամկետ և երկարաժամկետ բաժիններում ակտիվների (պարտավորությունների) «Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ» տողում գրանցվում են ապահովագրական ընկերության տնօրինման տակ եղած կանխիկ դրամական միջոցները և ոչ ռեզիդենտներին տրված (ոչ ռեզիդենտներից ստացած) ավանդները:

164. Երկարաժամկետ ակտիվների «Կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն, որից» տողում լրացվում է ապահովագրական ընկերության կողմից ոչ ռեզիդենտ ընկերության բաժնետոմսերում կամ բաժնային արժեթղթերում կատարված ներդրումների ընդհանուր մեծությունը, ընդ որում, ըստ առանձին ներդրման բաժնետիրական կապիտալում 10 %-ից ավել մասնակցությունը լրացվում է «Ուղղակի ներդրում» տողում, իսկ 10 %-ից պակաս մասնակցությունը կամ մասնակցություն ապահովող բաժնային արժեթղթերի տեսքով իրականացված ներդրումները՝ «Պորտֆելային ներդրում» տողում: Երկարաժամկետ պարտավորությունների «Կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն, որից» տողում լրացվում է ոչ ռեզիդենտի կողմից ապահովագրական ընկերության բաժնետոմսերում և բաժնային արժեթղթերում կատարված ներդրումների ընդհանուր մեծությունը, ընդ որում, ըստ առանձին ներդրման բաժնետիրական կապիտալում 10 %-ից ավել մասնակցությունը լրացվում է «Ուղղակի ներդրում» տողում, իսկ 10 %-ից պակաս մասնակցությունը կամ մասնակցություն ապահովող բաժնային արժեթղթերի տեսքով իրականացված ներդրումները՝ «Պորտֆելային ներդրում» տողում:

165. «Այլ ակտիվներ» կամ «Այլ պարտավորություններ» տողերում նշվում են այն գործառնությունները, որոնք վերը նշված գործիքներից և ոչ մեկին իրենց բնույթով չեն համապատասխանում, օրինակ կրեդիտորական կամ դեբիտորական ակտիվներն ու պարտավորությունները, ոչ ռեզիդենտներին վճարվելիք հաշվեգրված շահաբաժինները: Ընդ որում, կարճաժամկետ բաժնի «Այլ ակտիվներ/այլ պարտավորություններ» տողի «ժամկետանց» ենթատողում պետք է լրացնել ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ գործիքների գծով ժամկետանց դարձած միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը՝ համապատասխանաբար ակտիվներում կամ պարտավորություններում: Իսկ «Այլ ակտիվներ/այլ պարտավորություններ» տողի «ապահովագրության գծով կանխավճարներ» և «վերաապահովագրության գծով կանխավճարներ» տողում անհրաժեշտ է լրացնել ապահովագրության/վերաապահովագրության դիմաց տրված/ստացած կանխավճարները:

166. «Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում» սյունակում նշվում են համապատասխան տողերի հաշվեկշռային ցուցանիշները՝ հաշվետու ժամանակահատվածի սկզբում:

167. «Գործառնությունների» սյունակում լրացվում են այն բոլոր հաշվեգրված գործառնությունները, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տողերում նշված ֆինանսական գործիքներից յուրաքանչյուրի մասով:

168. «Գների փոփոխությունները» ներառում են առանձին ֆինանսական գործիքների (օրինակ՝ պարտքային արժեթղթեր) գների տատանման հետևանքով առաջացած արժեքային փոփոխությունները, եթե այդպիսիք կան:

169. «Փոխարժեքի փոփոխությունները» սյունակում պետք է լրացնել յուրաքանչյուր գործիքի գծով արժույթների տատանման հետևանքով առաջացած փոփոխությունները:

170. «Այլ ճշտումների» սյունակում լրացվում են այն փոփոխությունները, որոնք կապված են ակտիվներում կամ պարտավորություններում առանձին գործիքների վերադասակարգման, ակտիվի կամ պարտավորության միակողմանի դուրսգրման և այլ նման դեպքերի հետ: Օրինակ՝ ոչ ռեզիդենտի կողմից նախկինում տրամադրված պարտքի գումարից վերջինիս հրաժարումը նվազեցնում է ոչ ռեզիդենտի նկատմամբ տվյալ ապահովագրական ընկերության պարտավորությունները: Նշված դեպքը չի դիտարկվում որպես գործառնություն, այլ պարզապես ցույց է տրվում «այլ ճշտումներ» սյունակում՝ ներված պարտքի գումարի չափով նվազեցնելով ոչ ռեզիդենտների նկատմամբ պարտավորությունների ծավալը:

171. «Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում» տողում լրացվում են համապատասխան տողերի հաշվեկշռային ցուցանիշները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

## ԳԼՈՒԽ 15. ՉՎԱՍՏԱԿԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌԵՎՍ ՉՎՃԱՐՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ, ԲՈՆՈՒՍՆԵՐԻ ԵՎ ԶԵՂՉԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 15 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

172. Թիվ 15 հաշվետվությունը բաղկացած է 6 աղյուսակից:

173. Հաշվետվության 1-ին աղյուսակում արտացոլվում է չվաստակած ապահովագրավճարների պահուստի մասին տեղեկատվությունը: Աղյուսակի 2-րդ սյունակում արտացոլվում է կանոնակարգ 3/03-ի 5-րդ գլխի համաձայն հաշվարկվող «ՉԱՊi» մեծության արժեքը, 3-րդ սյունակում՝ կանոնակարգ 3/03-ի 11-րդ գլխի համաձայն հաշվարկվող «ՎՉԱՊi» մեծության արժեքը, 4-րդ սյունակում՝ 1-ին և 2-րդ սյունակներում արտացոլվող արժեքների տարբերությունը:

174. Ապահովագրության պայմանագրերի գծով չվաստակած ապահովագրավճարների պահուստի հաշվարկը կատարվում է համաձայն հաշվետվության 1.1 աղյուսակի, որը Կենտրոնական բանկ է ներկայացվում միայն Կենտրոնական բանկի կողմից պահանջվելու դեպքում:

175. Հաշվետվության 2-րդ աղյուսակում արտացոլվում է կանոնակարգ 3/03-ի 6-րդ գլխի համաձայն հաշվարկած ապահովագրողին ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստի, ինչպես նաև կանոնակարգ 3/03-ի 11-րդ գլխի համաձայն հաշվարկած՝ պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի վերաբերյալ տեղեկատվությունը:

176. Հաշվետվության 3-րդ աղյուսակում արտացոլվում է բոնուսների և զեղչերի պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը:

177. Ապահովագրության պայմանագրերի գծով բոնուսների և զեղչերի պահուստի հաշվարկը կատարվում է համաձայն հաշվետվության 3.1 աղյուսակի, որը Կենտրոնական բանկ է ներկայացվում միայն Կենտրոնական բանկի կողմից պահանջվելու դեպքում:

178. Հաշվետվության 4-րդ աղյուսակում արտացոլվում է տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը:

179. 4-րդ աղյուսակի 2-4-րդ սյուներում արտացոլվում են, համապատասխանաբար, կանոնակարգ 3/03-ի 32-րդ կետով սահմանված «Հ», «Պ», «Գ» և «ՏՉՊՊ»մեծությունների արժեքները:

## ԳԼՈՒԽ 16. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ, ՍԱԿԱՅՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԴԵՌԵՎՍ ՉՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ԳՈՐԾԱԿՑԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՄԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 16 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

180. Թիվ 16 հաշվետվությունը բաղկացած է 5 աղյուսակից:

181. Հաշվետվության 1-ին աղյուսակում լրացվում է տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստի գործակցի հաշվարկման մեջ ներառվող բտ-1, բտ-2, բտ-3 տարրերի հաշվարկի համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Աղյուսակը չի լրացվում այն ապահովագրության դասերի գծով, որոնցով ապահովագրողը գործունեություն ծավալել է մինչև երկու տարի տևողությամբ:

182. Հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացվում է տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստի գործակցի հաշվարկման մեջ ներառվող գտ-1, գտ-2, գտ-3 տարրերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ինչպես սահմանված է կանոնակարգ 3/03-ում: Աղյուսակը չի լրացվում այն ապահովագրության դասերի գծով, որոնցով ապահովագրողը գործունեություն ծավալել է մինչև երկու տարի տևողությամբ:

183. Հաշվետվության 3-րդ աղյուսակը նախատեսված է հավասարակշռման պահուստի վերաբերյալ տեղեկատվության արտացոլման համար: 2-8-րդ սյունակներում արտացոլվում են, համապատասխանաբար, ՀՊՆ, ՎԱտ, ՎՆմիջ, ՎՆտ, ՀՊ, ՍՇ, ԱՄՀՊ մեծությունները՝ ինչպես սահմանված է կանոնակարգ 3/03-ի Գլուխ 10-ում:

184. Հաշվետվության 4-րդ աղյուսակը արտացոլում է վաստակած ապահովագրավճարի մեծության հաշվարկի մեջ ներառվող տարրերի վերաբերյալ տեղեկատվություն: 2-5-րդ սյունակներում արտացոլվում են, համապատասխանաբար, Ա, Դ, ՉԱՊփոփ, ՎԱտ մեծությունները՝ ինչպես սահմանված է կանոնակարգ 3/03-ի կետ 39-ում:

184.1 Հաշվետվության 5-րդ աղյուսակում ներկայացվում է վնասաբերության միջին ցուցանիշի հաշվարկն՝ ըստ ապահովագրության դասերի: Աղյուսակի 2-րդ սյունակում արտացոլվում են տվյալ տարվա ընթացքում տվյալ ապահովագրության դասի գծով հաշվեգրված ապահովագրական հատուցումները (նվազեցված վերաապահովագրողների մասնաբաժնի չափով), 3-րդ սյունակում արտացոլվում է տվյալ տարվա ընթացքում պահանջների պահուստի (նվազեցված պահանջների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով) մեծության փոփոխությունը: 3-րդ և 4-րդ սյունակներում արտացոլվում են, համապատասխանաբար ՎԱտ և ՎՆտ տարրերը՝ հաշվարկած կանոնակարգ 3/03-ի Գլուխ 10-ում սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ 17. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 17 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

185. Թիվ 17 հաշվետվությունն արտացոլում է հաշվետու ժամանակաշրջանում կնքված ապահովագրության պայմանագրերի գծով կիրառված սակագները: Մասնավորապես, որպես առավելագույն (նվազագույն) սակագին նշվում է ապահովագրության տվյալ դասի գծով հաշվետու ժամանակաշրջանում կնքված ապահովագրության պայմանագրերով սահմանված առավելագույն (նվազագույն) սակագնի մեծությունը՝ տոկոսային արտահայտությամբ: Որպես միջին կշռված սակագներ՝ լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում կնքված ապահովագրության պայմանագրերով կիրառված սակագների՝ ապահովագրական գումարներով կշռված միջին մեծությունները:

186. Հաշվետվությունում ապահովագրական ընկերության կողմից սահմանված սակագներն ըստ ժամկետայնությունների պետք է լրացնել փաստացի կիրառման սկզբունքից ելնելով: Այսինքն՝ յուրաքանչյուր անգամ, երբ ընկերությունը կիրառում է սակագին (հաշվեգրում է նոր ապահովագրավճարներ), տվյալ սակագինը լրացնում է հաշվետվության այն սյունակում, որում նշված ժամկետայնության համար ապահովագրական ընկերությունը, նոր ապահովագրավճարներ հաշվեգրելով, ստանձնել է նոր ռիսկ: 2-րդից 13-րդ սյունակներում արտացոլվող սակագների հաշվարկման համար հիմք է հանդիսանում հետևյալ բանաձևը.

$$\text{Սակագին} = \frac{\text{հաշվեգրած ապահովագրավճար}}{\text{ապահովագրական գումար}} \times \frac{\text{365 օր}}{\text{կիրառված սակագնի օրերի քանակ}} \times 100\%$$

14-րդից 16-րդ սյունակներում արտացոլվող սակագների հաշվարկման համար հիմք է հանդիսանում հետևյալ բանաձևը.

$$\text{Սակագին} = \frac{\text{հաշվեգրած ապահովագրավճար}}{\text{ապահովագրական գումար}} \times 100\%$$

## ԳԼՈՒԽ 18. ԽՈՇՈՐ ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ (ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 18 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

187. Թիվ 18 հաշվետությունը լրացվում է հաշվետու ամսաթվի դրությամբ ապահովագրական ընկերության խոշոր հաճախորդ հանդիսացող ապահովադիրների (ապահովագրված անձանց) գծով:
188. Սույն կանոնակարգի իմաստով՝ խոշոր են համարվում այն հաճախորդները, ովքեր կողմ են հանդիսանում այնպիսի ապահովագրության պայմանագրերի, որոնցով նախատեսված համախառն ապահովագրավճարների մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գերազանցում է տվյալ ապահովագրական ընկերության՝ հաշվետու ամսվա վերջի դրությամբ գործող համապատասխան դասի ապահովագրության պայմանագրերով նախատեսված համախառն ապահովագրավճարների ընդհանուր մեծության 20 տոկոսը:
189. Այս հաշվետվությունը յուրաքանչյուր խոշոր ապահովադրի համար լրացվում է առանձին:
190. Հաշվետվության մեջ նշվում է տվյալ խոշոր ապահովադրի ռեզիդենտությունը՝ ընտրելով «Ռեզիդենտ» կամ «Ոչ ռեզիդենտ» բառերից մեկը:
191. Հաշվետվության 2-րդ և 3-րդ սյունակներում ցույց են տրվում տվյալ հաճախորդի հետ կնքված պայմանագրի ուժի մեջ մտնելու և գործողությունն ավարտվելու պայմանագրով նախատեսված ժամկետները օր/ամիս/տարի ֆորմատով:

## «ԳԼՈՒԽ 19. ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ, ԱՎԱՆԴՆԵՐԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՎ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 19 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

192. Թիվ 19 հաշվետվությունը բաղկացած է 4 աղյուսակից:
193. Հաշվետվության «Տրամադրված փոխառություններ, դեբիտորական պարտքեր, ավանդներ և վարկային ռիսկ պարունակող արտահաշվեկշռային հոդվածներ» աղյուսակ 1-ում արտացոլվում են ապահովադիրներից և ապահովագրական միջնորդներից ստացվելիք ապահովագրավճարները, համաապահովագրողներից ստացվելիք ապահովագրավճարները, վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ստացվելիք վերաապահովագրավճարները, վերաապահովագրողներից ստացվելիք միջնորդավճարները, վերաապահովագրողների, համաապահովագրողների և այլ անձանց նկատմամբ հատուցումների գծով պահանջները (այդ թվում՝ սուբրոգացիայի հետևանքով առաջացած), ապահովագրական պայմանագրերի գծով ստացվելիք այլ գումարները, բանկերում ապահովագրական ընկերության ավանդային, բանկային և այլ հաշիվները (այդ թվում՝ակրեդիտիվները), մուրհակները, ապահովագրական ընկերության կողմից տրամադրված փոխառությունները, աշխատակիցներին տրված առհաշիվ գումարները, գերավճարները, կանխավճարները, նախավճարները, դեբիտորական պարտավորությունները, այլ անձանց պարտավորությունների կատարումն ապահովող միջոցները, մասնավորապես՝ այլ անձանց պարտավորությունների կատարման համար գրավադրված ակտիվներ, տրամադրված երաշխավորություններ, վարկային ռիսկ պարունակող այլ արտահաշվեկշռային հոդվածներ (այսուհետ՝ ակտիվներ): Հաշվետվության մեջ չեն ընդգրկվում Կենտրոնական բանկի հետ կնքված ֆինանսական գործարքները, բյուջեի նկատմամբ դեբիտորական պարտավորությունները և այլ պահանջները, հաշվեգրված ստացվելիք տոկոսները, իսկ հաշվետվության 1-3-րդ աղյուսակներում չեն ընդգրկվում նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 25-ի

194. «1. Ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված փոխառություններ, դեբիտորական պարտքեր, ավանդներ» տողի 14-րդ և 15-րդ սյունակներում լրացվում են Կանոնակարգի 193-րդ կետում նշված այն ակտիվների գումարները (ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների գծով), որոնք չունեն մարման ժամկետ և չեն համարվում ժամկետանց, իսկ 16-րդ և 17-րդ սյունակներում լրացվում են սույն Կանոնակարգի 193-րդ կետում նշված բոլոր ակտիվների (ներառյալ մարման ժամկետ չունեցող ակտիվների) հանրագումարները ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների գծով: Ընդ որում՝ «1. Ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված փոխառություններ, դեբիտորական պարտքեր, ավանդներ» տողի վերջին երկու սյունակների թվերը պետք է հավասար լինեն 1.1, 1.2 և 1.3 տողերի «Ընդամենը» սյունակի համապատասխան թվերի և «1. Ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված փոխառություններ, դեբիտորական պարտքեր, ավանդներ» տողի 14 և 15 սյունակների թվերի հանրագումարին:

195. «1.1. Ժամկետային ակտիվներ, այդ թվում՝» տողում լրացվում են 193-րդ կետում նշված ժամկետային ակտիվների գումարներն ըստ պայմանագրային ժամկետների (այլ ոչ թե մարմանը մնացած ժամկետների): Առանձին տողերով ցույց են տրվում ապահովագրավճարների, հատուցումների գծով դեբիտորական պարտքերի գումարները (հատուցումների գծով դեբիտորական պարտքերը չեն ներառում սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջները (դեբիտորական պարտքերը), տրամադրված փոխառությունների ու ներդրված ավանդների գումարները:

196. «1.1. Ժամկետային ակտիվներ, այդ թվում՝» տողում արտացոլված թիվը կարող է մեծ կամ հավասար լինել «1.1.1. ապահովագրավճարների գծով դեբիտորական պարտքեր», «1.1.2. հատուցումների գծով դեբիտորական պարտքեր», «1.1.3. տրամադրված փոխառություններ և ներդրված ավանդներ» տողերի հանրագումարից: Ընդ որում, նույն սկզբունքը վերաբերում է նաև «1.2. Երկարաձգված ակտիվներ, այդ թվում՝» և «1.3. Ժամկետանց ակտիվներ, այդ թվում՝» տողերին:

197. «1.2. Երկարաձգված ակտիվներ,այդ թվում՝» տողում ցույց են տրվում սույն Կանոնակարգի 193-րդ կետում նշված ակտիվների գումարներն ըստ փաստացի (այլ ոչ թե պայմանագրային) երկարաձգված օրերի՝ համապատասխան սյունակում: Ընդ որում, եթե ակտիվը երկարաձգվել է մի քանի անգամ, ապա հաշվի է առնվում ընդհանուր երկարաձգումը: Այսինքն՝ եթե ակտիվը երկարաձգվել է 3 անգամ՝ 40-ական օրով, ապա ակտիվի գումարը ցույց է տրվում «91-180 օր» սյունակում: Եթե ակտիվի մարման ժամկետը երկարաձգվել է նախքան մարման սկզբնական ժամկետի ավարտը, ապա երկարաձգման օրվանից ակտիվը պետք է համարել երկարաձգված՝ արտացոլելով 1.2 (երկարաձգված ակտիվներ) տողերում: Առանձին տողերով ցույց են տրվում ապահովագրավճարները, հատուցումների գծով դեբիտորական պարտքերը (հատուցումների գծով դեբիտորական պարտքերը չեն ներառում սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջները (դեբիտորական պարտքերը), տրամադրված փոխառություններն ու ներդրված ավանդները:

198. «1.3. Ժամկետանց ակտիվներ, այդ թվում՝» տողում ցույց են տրվում սույն Կանոնակարգի 193-րդ կետում նշված ակտիվների գումարներն ըստ ժամկետանց և փաստացի երկարաձգված օրերի հանրագումարի՝ համապատասխան սյունակներում: Օրինակ՝ եթե ակտիվը երկարաձգված էր 80 օրով, և հաշվետվության ներկայացման օրը ժամկետանց է արդեն 60 օր, ապա գումարը ցույց է տրվում տողի «91-ից 180 օր» սյունակում: Առանձին տողերով ցույց են տրվում ապահովագրավճարները, հատուցումների գծով դեբիտորական պարտքերը (հատուցումների գծով դեբիտորական պարտքերը չեն ներառում սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջները (դեբիտորական պարտքերը), տրամադրված փոխառություններն ու ներդրված ավանդները: Միևնույն ակտիվը ցույց է տրվում նշված երեք տողերից մեկում (այսինքն՝ եթե ակտիվն արդեն երկարաձգվել կամ ժամկետանց է, ապա այն ցույց է տրվում համապատասխան տողում): Ընդ որում, «1.3. Ժամկետանց ակտիվներ, այդ թվում՝» տողի 14-րդ և 15-րդ սյունակում

199. Այն ակտիվները, որոնց համար նախատեսված չեն առանձին տողեր, արտացոլվում են «1.1. Ժամկետային ակտիվներ», «1.2. Երկարաձգված ակտիվներ», «1.3. Ժամկետանց ակտիվներ» տողերում:
200. «2. Ոչ ռեզիդենտներին տրամադրված փոխառություններ, ավանդներ, նրանց նկատմամբ դեբիտորական պարտքեր» տողի 14-րդ և 15-րդ սյունակներում լրացվում են Կանոնակարգի 193-րդ կետում նշված այն ակտիվների գումարները (ոչ ռեզիդենտների գծով), որոնք չունեն մարման ժամկետ, իսկ 16-րդ և 17-րդ սյունակներում լրացվում են սույն Կանոնակարգի 193-րդ կետում նշված բոլոր ակտիվների (ներառյալ մարման ժամկետ չունեցող ակտիվների) հանրագումարները ոչ ռեզիդենտների գծով: 2.1, 2.2 և 2.3 տողերում նշվում են ոչ ռեզիդենտներին տրամադրված ակտիվներն՝ ըստ համապատասխան դասակարգման: Այդ տողերը լրացվում են նույն սկզբունքով, ինչ որ 1.1, 1.2 և 1.3 տողերը:
201. «Տրամադրված փոխառությունների, դեբիտորական պարտքերի, ավանդների և վարկային ռիսկ պարունակող արտահաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկված պահուստների չափը» աղյուսակ 2-ում լրացվում են սույն Կանոնակարգի 193-րդ կետում նշված ակտիվների (պայմանագրերի) քանակները, գումարները, դրանց գծով ձևավորված պահուստների մնացորդները և պահուստավորման տոկոսները: Ընդ որում՝ ներդրված ավանդների և տրամադրված փոխառությունների գումարներն արտացոլվում են «Տրամադրված փոխառություններ» սյունակում, այլ անձանց պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների և վարկային ռիսկ պարունակող այլ արտահաշվեկշռային հոդվածները արտացոլվում են «արտահաշվեկշռային հոդվածներ» սյունակում, իսկ սույն Կանոնակարգի 193-րդ կետում նշված մյուս բոլոր ակտիվները՝ «Դեբիտորական պարտքեր» սյունակում:
202. Աղյուսակ 3-ի «Գումար (հազ դրամ)» սյունակում լրացվում է արժեթղթի՝ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ հաշվեկշռային արժեքը, «Մնացորդը (հազ. դրամ) սյունակում՝ ձևավորված պահուստի գումարը, իսկ «%» սյունակում՝ պահուստավորման տոկոսը:
203. «Տրամադրված փոխառությունների, դեբիտորական պարտքերի, ավանդների և վարկային ռիսկ պարունակող արտահաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկված պահուստների չափը» աղյուսակ 2-ում և «Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի չափը» աղյուսակ 3-ում սույն Կանոնակարգի 193-րդ կետում նշված ակտիվների և արժեթղթերի դասերի հաշվառումը ու դրանց գծով պահուստների ձևավորումը կատարվում է Կանոնակարգ 3/09-ի համաձայն:
204. «Չաշխատող և արտահաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ» աղյուսակ 4-ի «Չաշխատող ակտիվներ (ամսվա սկզբին)» սյունակում արտացոլվում է սույն Կանոնակարգի 193-րդ կետում նշված այն ակտիվների հանրագումարը, որոնք Կանոնակարգ 3/09-ի համաձայն դասակարգվել են որպես չաշխատող բացառությամբ արտահաշվեկշիռ դուրս գրված ակտիվների (այսուհետ՝ չաշխատող ակտիվներ)՝ հաշվետու ամսվան նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ:
205. Աղյուսակ 4-ի «Ամսվա ընթացքում չաշխատող ակտիվների փոփոխություն» սյունակում արտացոլվում է չաշխատող ակտիվների գծով հաշվետու ամսվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների զուտ գումարը (ավելացում կամ նվազում):
206. Աղյուսակ 4-ի «Չաշխատող ակտիվներ (ամսվա վերջին)» սյունակում լրացվում է չաշխատող ակտիվների հանրագումարը՝ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ:
207. Չաշխատող ակտիվների արտարժութային հոդվածների մնացորդներն ամսվա սկզբի դրությամբ, այդ հոդվածների գծով փոփոխություններն ամսվա ընթացքում և մնացորդներն ամսվա վերջի դրությամբ ներկայացվում են հաշվետու ամսվա վերջին օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքներով:
208. «Արտահաշվեկշռային մնացորդը ամսվա սկզբին» սյունակում արտացոլվում են արտահաշվեկշիռ դուրս գրված չաշխատող ակտիվների հանրագումարը հաշվետու ամսվան նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ:
209. «Ամսվա ընթացքում արտահաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ» սյունակում արտացոլվում է հաշվետու ամսվա ընթացքում արտահաշվեկշիռ դուրս գրված չաշխատող ակտիվների հանրագումարը:

210. «Ամսվա ընթացքում արտահաշվեկշիռ դուրս գրված ակտիվների վերադարձ» սյունակում արտացոլվում են հաշվետու ամսվա ընթացքում պարտապանների կողմից վերադարձված կամ մարված ակտիվների հանրագումարը, որոնք դուրս են գրվել հաշվեկշռից:
211. «Ամսվա ընթացքում արտահաշվեկշռից դուրսգրումներ» սյունակում արտացոլվում են հաշվետու ամսվա ընթացքում ապահովագրական ընկերության կողմից զիջված (կամ ներված) ակտիվների հանրագումարը, ինչպես նաև այն ակտիվների հանրագումարը, որոնք ապահովագրական ընկերության կողմից դուրս են գրվել դրանց նկատմամբ պահանջի իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետը լրանալու դեպքում:
212. Արտահաշվեկշռային արտարժութային հոդվածների մնացորդներն ամսվա սկզբի դրությամբ, այդ հոդվածների գծով հոսքերն ամսվա ընթացքում և մնացորդներն ամսվա վերջի դրությամբ ներկայացվում են հաշվետու ամսվա վերջին օրվա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքներով:

## ԳԼՈՒԽ 20. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 20 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

212.1 Սույն կանոնակարգի հավելված 20-ի թիվ 20 հաշվետվությունը բաղկացած է 3 աղյուսակներից:
213.Սույն գլխով նախատեսված հաշվետվությունն արտացոլում է հաշվետու օրվան նախորդող օրվա ժամը $16^{\underline{00}}$ -ից մինչև հաշվետու օրվա ժամը $16^{\underline{00}}$ արժեթղթերի երկրորդային շուկայում ապահովագրական ընկերության կողմից արժեթղթերով իրականացված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը, բացառություն են կազմում.
1) Կենտրոնական բանկի հետ իրականացված գործառնությունները,
2) ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միջոցով կնքված գործարքները,
3) հետգնման ժամանակ արժեթղթերի վաճառքի գործարքները,
4) պարտատոմսերի մարումները (այդ թվում՝ մասնակի մարումները),
5) ռեպո/հակադարձ ռեպո գործարքների մարումները (սույն կետը վերաբերում է միայն սույն գլխով նախատեսված հաշվետվության երկրորդ աղյուսակին),
6) ռեպո/հակադարձ ռեպո գործարքների պայմանների փոփոխումները, բացառությամբ գործարքի ժամկետի երկարաձգման (սույն ենթակետը վերաբերում է միայն սույն գլխով նախատեսված հաշվետվության երկրորդ աղյուսակին)

214.Սույն գլխով նախատեսված հաշվետվությունը ներկայացվում է այն օրերի համար, որոնց ընթացքում արժեթղթերի երկրորդային շուկայում շրջանառության միջին օրական ծավալը գերազանցում է 3.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:
215. Սույն գլխով նախատեսված հաշվետվության աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) «Արժեթղթի դասը» սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի (թողարկման պետական գրանցման համարի) առկայության դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում: Սույն ենթակետով նախատեսված սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:
2) «Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը» սյունակում նշվում է արժեթղթի կոդը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում թողարկված ոչ պետական արժեթղթերի դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը: Պետական արժեթղթերի

3) «Թողարկողի ֆիրմային անվանումը գտնվելու վայրը» սյունակը լրացվում է արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (բնակության վայր): Սույն ենթակետով նախատեսված սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

4) «Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով» սյունակում լրացվում է միայն արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը ըստ որում՝ սույն ենթակետով նախատեսված սյունակը լրացվում է միայն ծավալային արժեթղթերի (արժեթղթեր, որոնք չունեն քանակ, այլ միայն ծավալ, մասնավորապես՝ պետական արժեթղթերը) համար:

5) «Գործարքի արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի կոդը:

6) «Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը» սյունակում լրացվում է ոչ ծավալային արժեթղթերի դեպքում միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված տարեկան եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և(կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով՝ ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ: Սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (մասնավորապես՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ արժեթղթերի համար և այլն):

7) «Գործարքի կնքման ամսաթիվը» սյունակում լրացվում է յուրաքանչյուր գործարքի կնքման ամսաթիվը, իսկ երկարաձգված գործարքների դեպքում՝ երկարաձգման ամսաթիվը՝ հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի (օրինակ՝ 31/01/08):

8) «Գործարքի մյուս կողմը» սյունակում լրացվում է գործարքի մյուս կողմ հանդիսացող սուբյեկտին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, դրա բացակայության դեպքում նշվում է այդ կողմի ռեզիդենտությունը՝ կատարելով «ռեզիդենտ» կամ ոչ ռեզիդենտ» նշումը: Սույն ենթակետով նախատեսված սյունակը կարգավորվող շուկայի գործարքների դեպքում չի լրացվում:

9) «Նշումներ» սյունակը լրացվում է այն դեպքում, եթե «Գործարքի մյուս կողմը» հանդիսանում է ներդրումային ընկերություն կամ ներդրումային ծառայություններ մատուցող անձ՝ կատարելով «Ներդրումային» նշումը:

216. Սույն գլխով նախատեսված հաշվետվության 1-ին աղյուսակում լրացվում են ապահովագրական ընկերության կողմից իրականացված արժեթղթերի առքի ու վաճառքի գործարքների վերաբերյալ տեղեկությունները:

217. Ի լրումն 215-րդ կետով սահմանված լրացման կանոնների՝ սույն գլխով նախատեսված հաշվետվության աղյուսակ 1-ի համար նախատեսվում են լրացման հետևյալ լրացուցիչ կանոնները.

1) «Գործարքի տեսակը առք (վաճառք)» սյունակում նշվում է հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի տեսանկյունից գործարքը առք է, թե՝ վաճառք:

2) «Քանակը» սյունակում լրացվում է գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը՝ հատերով, ընդ որում՝ ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

3) «Միավոր արժեթղթի գինը» սյունակում լրացվում է մեկ արժեթղթի առքի (վաճառքի) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

4) «Ընդհանուր գումարը» հաշվարկվում է որպես միավոր գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:

218. Սույն գլխով նախատեսված հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացվում են ապահովագրական ընկերության կողմից կնքված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների վերաբերյալ տեղեկությունները:

219. Ի լրումն 215-րդ կետով սահմանված լրացման կանոնների՝ սույն գլխով նախատեսված հաշվետվության աղյուսակ 2-ի համար նախատեսվում են լրացման հետևյալ լրացուցիչ կանոնները.

1) «Գործարքի տեսակը (ռեպո/ հակադարձ ռեպո)» սյունակում նշվում է՝ հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի տեսանկյունից գործարքը ռեպո է, թե հակադարձ ռեպո: Արժեթղթերի վաճառքի գործարքը՝ հետգնման պայմանով, ներկայացվում է որպես «ռեպո» գործարք, իսկ արժեթղթերի առքի գործարքը՝ հետ վաճառելու պայմանով, լրացվում է որպես «հակադարձ ռեպո» գործարք:

2) «Ռեպո գործարքի բնույթը» սյունակում նշվում է «նոր կնքված», «երկարաձգված» կամ «կրճատված»: Ընդ որում՝ ռեպոն (հակադարձ ռեպոն) երկարաձգված է համարվում, եթե երկարաձգվել է նախկինում կնքված պայմանագրի գործողության ժամկետը, իսկ կրճատված է համարվում, եթե կրճատվել է նախկինում կնքված պայմանագրի գործողության ժամկետը:

3) «Միավոր արժեթղթի գինը» սյունակում նշվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային գնման կամ վաճառքի միավորի գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

4) «Քանակը» սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի հիմքում ընկած արժեթղթի քանակը: Ընդ որում՝ ծավալային արժեթղթերով ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

5) «Ընդհանուր գումարը» հաշվարկվում է որպես միավոր գնի և քանակի արտադրյալ: Ընդ որում՝ ծավալային արժեթղթերով ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման դեպքում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային առքի (վաճառքի) ընդհանուր արժեքը:

6) «Տարեկան ռեպո (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը» սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի տարեկան (տարին՝ 365 կամ 366 օր) տոկոսադրույքը՝ ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ: Այն դեպքում, երբ տոկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով:

220. Սույն գլխով նախատեսված հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու օրվա ժամը 16:00-ի դրությամբ առկա ապահովագրական ընկերության կողմից կնքված և չմարված բոլոր ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների վերաբերյալ տեղեկությունները, ընդ որում, գործարքի պայմանների փոփոխության դեպքում ներկայացվում են գործարքի վերաբերյալ ամենավերջին տեղեկությունները:

221. Ի լրումն 215-րդ կետով սահմանված լրացման կանոնների՝ սույն գլխով նախատեսված հաշվետվության աղյուսակ 3-ի համար նախատեսվում են լրացման հետևյալ լրացուցիչ կանոնները.

1) «Գործարքի տեսակը (ռեպո/ հակադարձ ռեպո)» սյունակում նշվում է՝ հաշվետվությունը ներկայացնող սուբյեկտի տեսանկյունից գործարքը ռեպո է, թե հակադարձ ռեպո: Արժեթղթերի վաճառքի գործարքը՝ հետգնման պայմանով, ներկայացվում է որպես «ռեպո» գործարք, իսկ արժեթղթերի առքի գործարքը՝ հետ վաճառելու պայմանով, լրացվում է որպես «հակադարձ ռեպո» գործարք:
2) «Միավոր արժեթղթի գինը» սյունակում նշվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային գնման կամ վաճառքի միավորի գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:
3) «Քանակը» սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի հիմքում ընկած արժեթղթի քանակը: Ընդ որում՝ ծավալային արժեթղթերով ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:
4) «Ընդհանուր գումարը» հաշվարկվում է որպես միավոր արժեթղթի գնի և քանակի արտադրյալ: Ընդ որում՝ ծավալային արժեթղթերով ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման դեպքում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային առքի (վաճառքի) ընդհանուր արժեքը:

«Տարեկան ռեպո (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը» սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի տարեկան (տարին՝ 365 կամ 366 օր) տոկոսադրույքը՝ ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ: Այն դեպքում, երբ տկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով:

## ԳԼՈՒԽ 21. ՏԱՐԵԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕԳՏԻՆ ՎՃԱՐՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 21 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

222. Թիվ 21 հաշվետվությանը կից Կենտրոնական բանկ են ներկայացվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարված հերթական տարեկան պետական տուրքի, դրա վճարումն ուշացնելու համար վճարված տույժի (առկայության դեպքում) վճարումը հավաստող փաստաթղթերի (պետական տուրքի վճարման անդորրագիր, վճարման հանձնարարական և այլն) սքան արված տարբերակները:

223. Թիվ 21 հաշվետվության համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում ապահովագրության յուրաքանչյուր դասի լիցենզիայի տրամադրման օրվանից մինչև յուրաքանչյուր հաջորդ տարվա նույն օրն ընկած ժամանակահատվածը:

224. Թիվ 21 հաշվետվությունը բաղկացած է 2 աղյուսակից:

225. Հաշվետվության 1-ին աղյուսակում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանում վճարված և վճարման ենթակա հերթական տարեկան պետական տուրքի վերաբերյալ տեղեկատվություն:

226. Հաշվետվության 1-ին աղյուսակի 1-ին սյունակում նշվում են ապահովագրության այն դասերը, որոնցով ապահովագրական գործունեություն իրականացնելու համար ապահովագրական ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ունի լիցենզիա:

227. Հաշվետվության 1-ին աղյուսակի 2-րդ սյունակում նշվում է 1-ին սյունակում նշված ապահովագրության յուրաքանչյուր դասի համար Կենտրոնական բանկի կողմից լիցենզիայի տրամադրման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով:

228. Հաշվետվության 1-ին աղյուսակի 3-րդ սյունակում նշվում է 1-ին սյունակում նշված ապահովագրության յուրաքանչյուր դասի համար հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հերթական տարեկան պետական տուրքի գծով վճարված գումարը (առանց տույժերի գումարի): Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրական ընկերության կողմից ապահովագրության նույն դասի գծով կատարված առանձին վճարումները պետք է արտացոլել առանձին տողերով, բացառությամբ նույն օրվա ընթացքում նույն ժամանակաշրջանի համար կատարված մեկից ավելի վճարումների, որոնք նշված սյունակում լրացվում են մեկ թվով:

229. Հաշվետվության 1-ին աղյուսակի 4-րդ սյունակում լրացվում է 1-ին սյունակում նշված ապահովագրության յուրաքանչյուր դասի համար նախատեսված հերթական տարեկան պետական տուրքի վճարումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասնակի չկատարելու համար հաշվետու ժամանակաշրջանում վճարված տույժի չափը: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրական ընկերության կողմից ապահովագրության նույն դասի համար հաշվարկված տույժերի գծով կատարված առանձին վճարումները պետք է արտացոլել առանձին տողերով՝ յուրաքանչյուր վճարված գումարի համար լրացնելով միայն սույն աղյուսակի 1-ին, 5-րդ, 8-րդ և 9-րդ սյունակները, բացառությամբ նույն օրվա ընթացքում ապահովագրության նույն դասի գծով կատարված մեկից ավելի վճարումների, որոնք նշված սյունակում լրացվում են մեկ թվով:

230. Հաշվետվության 1-ին աղյուսակի 5-րդ սյունակում նշվում է հաշվետու ժամանակաշրջանում վճարված պետական տուրքի կամ տույժերի վճարման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով: Այն դեպքում, երբ վճարված պետական տուրքի և տույժերի վճարման ամսաթվերը համընկնում են, ապա այդ գումարները լրացվում են մեկ տողով, հակառակ դեպքում՝ լրացվում են առանձին տողերով՝ յուրաքանչյուր վճարված գումարի համար նշելով համապատասխան վճարման ամսաթիվը:

231. Հաշվետվության 1-ին աղյուսակի 6-րդ և 7-րդ սյունակներում համապատասխանաբար լրացվում են այն ժամանակաշրջանի սկիզբը և վերջը, որի համար վճարվել է 3-րդ սյունակում նշված գումարը: Օրինակ, եթե ապահովագրության որևէ դասով գործունեություն իրականացնելու լիցենզիան տրամադրվել է 11.08.2003թ. և ապահովագրական ընկերությունը կատարել է հերթական տարեկան պետական տուրքի վճարում 01.07.2008թ.՝ հաջորդ տարվա համար, ապա 6-րդ սյունակում կնշվի 11/08/2008, իսկ 7-րդ սյունակում՝ 11/08/2009: Այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունը մեկ վճարումով իրականացնում է պետական տուրքի վճարում տարբեր ժամանակաշրջանների համար, ապա դրանք պետք է արտացոլել առանձին տողերով՝ վճարված գումարի յուրաքանչյուր մասի համար լրացնելով համապատասխան ժամանակաշրջանը:

232. Հաշվետվության 1-ին աղյուսակի 8-րդ սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետության բյուջեի համապատասխան հաշվի համարը, որին կատարվել է 3-րդ և (կամ) 4-րդ սյունակներում նշված գումարների վճարումը:

233. Հաշվետվության 1-ին աղյուսակի 9-րդ սյունակում լրացվում է 5-րդ սյունակում նշված օրվա վերջի դրությամբ ապահովագրության տվյալ դասի համար նախատեսված տարեկան պետական տուրքի գծով վճարման ենթակա գումարի ժամկետանց մասի և վճարման ենթակա տույժերի չափը: «Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ» տողը լրացվում է միայն 9-րդ սյունակի համար, որտեղ նշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ապահովագրության բոլոր դասերի համար նախատեսված պետական տուրքի գումարի ժամկետանց մասի և վճարման ենթակա տույժերի հանրագումարը:

234. Հաշվետվության 2-րդ աղյուսակում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանում Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին վճարված և վճարման ենթակա պարտադիր վճարների վերաբերյալ տեղեկատվություն:

235. Հաշվետվության 2-րդ աղյուսակի 1-ին սյունակում նշվում է ապահովագրական ընկերության կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին սույն աղյուսակի 3-րդ սյունակում նշված եռամսյակի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր վճարի այն մասը, որը դեռևս չի վճարվել 4-րդ սյունակում նշված օրվա դրությամբ:

236. Հաշվետվության 2-րդ աղյուսակի 2-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում ապահովագրական ընկերության կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին վճարված պարտադիր վճարները (առանց տոկոսագումարների): Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրական ընկերության կողմից կատարված առանձին վճարումները պետք է արտացոլել առանձին տողերով, բացառությամբ նույն օրվա ընթացքում նույն ժամանակաշրջանի համար կատարված մեկից ավելի վճարումների, որոնք նշված սյունակում լրացվում են մեկ թվով:

237. Հաշվետվության 2-րդ աղյուսակի 3-րդ սյունակում նշվում է տարվա այն եռամսյակը, որի համար վճարվել է 2-րդ սյունակում նշված գումարը: Եռամսյակը նշվում է հետևյալ ֆորմատով՝ եռամսյակ/տարի (օրինակ՝ 2/2009): Այն դեպքում, երբ ապահովագրական

238. Հաշվետվության 2-րդ աղյուսակի 4-րդ սյունակում նշվում է հաշվետու ժամանակաշրջանում վճարված պարտադիր վճարների կամ տոկոսագումարների վճարման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով: Այն դեպքում, երբ պարտադիր վճարների և տոկոսագումարների վճարման ամսաթվերը համընկնում են, ապա այդ գումարները լրացվում են մեկ տողի վրա, հակառակ դեպքում՝ լրացվում են առանձին տողերով՝ յուրաքանչյուր վճարված գումարի համար նշելով համապատասխան վճարման ամսաթիվը:

239. Հաշվետվության 2-րդ աղյուսակի 5-րդ սյունակում նշվում է սույն աղյուսակի 4-րդ սյունակում նշված օրվա սկզբի դրությամբ՝ ժամկետանց օրերի համար ՀՀ օրենսդրության համաձայն հաշվեգրված և չվճարված տոկոսագումարների չափը (առկայության դեպքում): Այն դեպքում, երբ 4-րդ սյունակում առկա են նույն ամսաթիվն ունեցող մեկից ավելի տողեր, ապա սույն աղյուսակի 5-րդ, 6-րդ և 8-րդ սյունակները լրացվում են միայն վերջին տողի համար:

240. Հաշվետվության 2-րդ աղյուսակի 6-րդ սյունակում լրացվում է ժամկետանց օրերի համար հաշվեգրված տոկոսագումարների՝ հաշվետու ժամանակաշրջանում վճարված գումարը: Հաշվետու ժամանակաշրջանում ապահովագրական ընկերության կողմից տոկոսագումարների գծով կատարված առանձին վճարումները պետք է արտացոլել առանձին տողերով (բացառությամբ նույն օրվա ընթացքում կատարված մեկից ավելի վճարումների, որոնք նշված սյունակում լրացվում են մեկ թվով)՝ յուրաքանչյուր վճարված տոկոսագումարի համար լրացնելով միայն սույն աղյուսակի 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ սյունակները:

241. Հաշվետվության 2-րդ աղյուսակի 7-րդ սյունակում լրացվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի համապատասխան հաշվի համարը, որին կատարվել է սույն աղյուսակի 2-րդ և (կամ) 6-րդ սյունակում նշված գումարների վճարումը:

242. Հաշվետվության 2-րդ աղյուսակի 8-րդ սյունակում լրացվում է սույն աղյուսակի 4-րդ սյունակում նշված օրվա վերջի դրությամբ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին վճարման ենթակա պարտադիր վճարի ժամկետանց մասի և վճարման ենթակա տոկոսագումարների հանրագումարը: «Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ» տողը լրացվում է միայն սույն աղյուսակի 8-րդ սյունակի համար, որտեղ նշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին վճարման ենթակա պարտադիր վճարի ժամկետանց մասի և վճարման ենթակա տոկոսագումարների չափը:

(22-րդ գլուխն ուժը կորցրել է 07.12.10թ. թիվ 327 Ն որոշմամբ)

## ~~ԳԼՈՒԽ 22. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 22 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ~~

~~243. Թիվ 22 հաշվետվությունը բաղկացած է 3 աղյուսակից:~~

~~244. Սույն կանոնակարգի իմաստով՝ ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժութային ռիսկ, երբ դրանց մեծությունները, դրանց գծով ստացվելիք կամ վճարելիք գումարները ՀՀ դրամային արտահայտությամբ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել արտարժույթի՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված:~~

~~245. Արտարժութային դիրքերի հաշվարկում ակտիվների և պարտավորությունների մեջ ընդգրկվում են նաև արտարժութային ռիսկ պարունակող ածանցյալ գործիքները՝ հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող ապահովագրական գումարները՝ հետհաշվեկշռում արտացոլված արժեքի 0.07%-ի չափով:~~

~~246. Արտարժութային դիրքը ապահովագրական ընկերության արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունների միջև եղած տարբերությունն է: Արտարժութային դիրքերը սահմանվում են.~~

ա. երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,

բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,

գ. փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի,

դ. բաց, եթե տարբերությունը մեծ կամ փոքր է զրոյից:

247. Արտարժութային առավելագույն դիրքը արտարժութային երկար դիրքերի հանրագումարի և արտարժութային կարճ դիրքերի հանրագումարի բացարձակ մեծություններից առավելագույն մեծությունն է:

248. Արտարժութային դիրքերի հաշվարկն իրականացվում է արտարժույթների առանձին տեսակներով: Ընդ որում, արտարժութային դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» Կանոնակարգ 3/02-ի համաձայն հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող և արտարժութային ռիսկ պարունակող տարրերը:

249. Արտարժութային դիրքերը հաշվարկվում են յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում Հայաստանի Հանրապետության դրամով՝ հիմք ընդունելով տվյալ օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Եթե ապահովագրական ընկերությունն ունի բաց արտարժութային դիրք այնպիսի արտարժույթի գծով, որի փոխարժեքը Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ չի արտացոլվում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի պաշտոնական էլեկտրոնային կայքում, ապա պետք է հիմք ընդունել տվյալ պետության՝ Կենտրոնական բանկի կողմից հաստատված արտարժույթ/ԱՄՆ դոլար և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հաստատված ԱՄՆ դոլար/Հայաստանի Հանրապետության դրամ փոխարժեքները:

250. Այն օրերին, երբ ապահովագրական ընկերության արտարժութային դիրքերը փոփոխությունների չեն ենթարկվել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), լրացվում են նախորդ օրվա տվյալները:

251. Հաշվետվության 1-ին աղյուսակում ներկայացվում են ընկերության արտարժութային առավելագույն դիրքերի մեծությունները՝ օրական կտրվածքով: Իսկ աղյուսակի վերջին տողում լրացվում է հաշվետու ամսվա յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ արտարժութային առավելագույն դիրքերից առավելագույնի մեծությունը:

252. Հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացվում են արտարժութային դիրքերի մեծությունները հաշվետու ամսվա յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Ընդ որում, երբ առանձին արտարժույթի գծով ապահովագրական ընկերությունն ունի կարճ դիրք, ապա այդ արտարժույթի գծով համապատասխան օրվա արտարժութային դիրքի մեծությունը նշվում է բացասական նշանով:

253. Հաշվետվության 2-րդ աղյուսակի «Արտարժույթի ISO կոդը» տողի սյունակներում ապահովագրական ընկերությունը լրացնում է այն արտարժույթների ISO կոդը, որի գծով ապահովագրական ընկերությունն ունի բաց արտարժութային դիրք:

254. Հաշվետվության 3-րդ աղյուսակում ներկայացվում է ապահովագրական ընկերության արտարժութային ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հաշիվների կազմն ըստ արտարժույթների:

255. Հաշվետվության 3-րդ աղյուսակում «Արտարժույթի ISO կոդը» տողի սյունակներում ապահովագրական ընկերությունը պետք է լրացնի այն արտարժույթների ISO կոդը, որոնց գծով ապահովագրական ընկերությունն ունի արտարժութային ռիսկ պարունակող ակտիվներ, պարտավորություններ և արտահաշվեկշռային հաշիվներ:

256. Հաշվետվության 3-րդ աղյուսակի տող 1-ում լրացվում է ապահովագրական ընկերության արտարժութային ակտիվների հանրագումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների:

257. Հաշվետվության 3-րդ աղյուսակի 1.1–1.7 տողերում համապատասխանաբար լրացվում են ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարները, համաապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարները, ապահովագրական հատուցումների գծով համաապահովագրողների, վերաապահովագրողների և այլ անձանց նկատմամբ պահանջների գումարները և ապահովագրության պայմանագրերից ստացվելիք այլ գումարները հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների:

258.Հաշվետվության 3-րդ աղյուսակի տող 2-ում լրացվում է ապահովագրական ընկերության արտարժութային պարտավորությունների հանրագումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների:

259. Հաշվետվության 3-րդ աղյուսակի 2.1-2.6 տողերում համապատասխանաբար լրացվում են ուղղակի ապահովագրության, համաապահովագրության պայմանագրերի, վերաապահովագրության ընդունված ռիսկերի գծով վճարվելիք գումարները, ապահովագրության գծով համաապահովագրողներին և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարները և ապահովագրության գծով ստացված կանխավճարները հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների:

~~260. Հաշվետվության 3-րդ աղյուսակի 3-րդ տողում լրացվում է ապահովագրական ընկերության արտարժութային հետհաշվեկշռային հաշիվների հանրագումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների:~~

~~261. Հաշվետվության 3-րդ աղյուսակի 3.1-3.3 տողերում համապատասխանաբար լրացվում են ապահովագրական ընկերության՝ արտարժութային ռիսկ պարունակող ապահովագրական գումարների, ածանցյալ գործիքների գծով պայմանական ակտիվների և պարտավորությունների մեծությունները՝ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների:~~